614.88...
Հ-24

... ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1924—1927 թ. թ.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ

ՅԵՐԵՎԱՆ 1928

27.06.2013

614.88
Հ-94

01 MAR 2010

20 JUL 2010

5 FEB 2008

1003
13843

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

**1924—1927 թ. թ.**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ

ՅԵՐԵՎԱՆ 1928

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 3450
ԳՐԱՌԵՊ. 796 Բ. ՏԻՐԱԺ 1000

Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերության վերջին ընդհանուր ժողովը կայացել է 1924 թ. հունիսի 8-ին և այդ ժողովին ներկայացվել է տեղեկագիր Հ. Կարմիր խաչի գործունեյության մասին սկսած նրա հիմնադրության օրից, այն է 1920 թ. մինչև 1924 թ. ապրիլ ամիսը։ Այդ տեղեկագիրը հրատարակվել է նաև առանձին գրքույկով։

1924 թվականից ի վեր Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերությունը հնարավորություն չի ունեցել նոր ընդհանուր ժողով հրավիրելու։ Դրա գլխավոր պատճառն այն էր, վոր Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը վորոշել էր նոր հիմքերի վրա դնել Հ. Կ. Խաչի կազմակերպչական կառուցվածքը, ընդարձակել այն և գրավել նրա մեջ աշխատավորական և գյուղացիական լայն զանգվածների գործոն մասնակցությունը։

Այդ ուղղությամբ աշխատանքներ տանելով՝ Գլխավոր Վարչությունը նպատակ էր դրել առաջիկա համագումարը հրավիրել համահայաստանյան հանրապետական մասշտաբով, միևնույն ժամանակ ուրվագծելով՝ հնարավորություն ստեղծել վոչ հեռու ապագայում կայացնելու համահայկական համագումար, մասնակցությամբ նաև արտասահմանյան իր մասնաճյուղերի ներկայացուցիչների։

Ներկա ժողովը առաջին համահայաստանյան հանրապետական համագումարն է, վորին և Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը ներկայացնում է այս տեղեկագիրը Հ. Կարմիր Խաչի Ընկերության գործունեյության մասին 1924–1927 տարիների ընթացքում։ Ավելորդ կրկնություններից խուսափելու համար այս տեղեկագրի մեջ նախորդ շրջանի աշխատանքների մասին մենք կխոսենք միայն այն չափով, վոր չափով դա անհրաժեշտ է գործունեյության ընդհանուր կապը պահպանելու համար։

Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերության հիմնական նպատակները հաշվետարիների ընթացքում մնացել են նույնը, ինչ վոր թելադրում է Ընկերության կանոնադրությունը և ինչ վոր բղխում է մեր յերկրի ուրույն պայմաններից և Ժնևի 1864 թ. կոնվենցիայից ու հետագայում այդ կոնվենցիան լրացնող այլ միջազգային ակտերից։

Այդ նպատակներն են.

1. Ոգնություն վիրավորներին և հիվանդներին պատերազմի ժամանակ, ոգնություն ռազմագերիներին, ինչպես և պատերազմի հաշմանդամներին։

2․ Պայքար սոցիալական ախտերի դեմ, գլխավորապես մալարիայի, տրախոմայի և սիֆիլիսի դեմ։

3․ Պայքար յերեխաների անապաստանության դեմ․

4․ Օգնություն յերկիր վերադարձող գաղթականներին․

5․ Օգնություն ազգաբնակության տարերային աղետների և համաճարակների ժամանակ։

6․ Ազգաբնակության մեջ առողջապահական և սանիտարական գիտելիքների տարածում և դրա հետ կապված առաջին օգնության խմբակների կազմակերպություն։

1924 թվի հունիս 8-ի ընդհանուր ժողովում ընտրվում է Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերության Գլխավոր Վարչությունը հետևյալ կազմով․

1․ ԲԺ․ Ս․ ԿԱՄՍԱՐԱԿԱՆ,
2․ Մ․ ՍԱՀԱԿՅԱՆ,
3․ Ն․ ՀԱԿՈԲՅԱՆ,
4․ ՅԵ․ ՅԵՐԶՆԿՅԱՆ,
5․ Ս․ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆ,
6․ ԳՐ․ ՋՈՒԲԱՐ,
7․ Վ․ ՊՈՂՈՍՅԱՆ,
8․ ՄԱՐԻԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ,
9․ ՖԼՈՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ,
10․ Դ․ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ,
11․ ՀՐ․ ԳԱԼԻԿՅԱՆ,
12․ Ներկայացուցիչ Լոռի-Փամբակից,
13․ Ներկայացուցիչ Զանգեզուրից,
14․ Ներկայացուցիչ Պարսկաստանից,
15․ Ներկայացուցիչ Մարսելից,
16․ Ներկայացուցիչ Նյու-Յորքից,
17․ Ներկայացուցիչ Պարիզից։

Գլխավոր Վարչության անդամների թեկնածուներ ընտրվում են․

1․ Գ․ ՀԱԿՈԲՅԱՆ,
2․ ՄԵԼԻՔ-ՅՈԼՉՅԱՆ,
3․ ԲԺ․ ՋԱԼԼԱԴՅԱՆ,
4․ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ,
5․ ԱՆՏԵԼԵՊՅԱՆ։

Միևնույն ընդհանուր ժողովը ընտրում է Վերստուգիչ Հանձնաժողովի հետևյալ կազմը․

1․ ԱՐ․ ՄԱԿԱՐՅԱՆ,
2․ Հ․ ԽՈՐԵՆՅԱՆ,
3․ ԲԺ, ՅԵՂԻԱԶԱՐՅԱՆ,

Թեկնածուներ՝



1․ Ա․ ԳՐԻԳՈՐՅԱՆ,
2․ Ա․ ՎԱՐԴԱՆՅԱՆ։

Վերստուգիչ Հանձնաժողովի անդամ Հ․ ԽՈՐԵՆՅԱՆԸ 1925 թ․ ապրիլին հրաժարվում է այդ պաշտոնից և նրա տեղ հրավիրվում է թեկնածու Ա․ ԳՐԻԳՈՐՅԱՆ։

Գլխավոր Վարչության և Վերստուգիչ Հանձնաժողովի այդ ընտրված կազմը մնացել է անփոփոխ մինչև այժմ։

Նորընտիր Գլխավոր Վարչությունը իր առաջին նիստը ունեցել է նույն թվի հուլիսի 17-ին, և այդ նիստում ընկերության ընթացիկ գործերը վարելու համար ընտրել է նախագահություն հետևյալ կազմով․ Նախագահ Բժ․ Ս․ Կամսարական, փոխ-նախագահներ Վ․ Պողոսյան և Մ․ Սահակյան, գանձապահ Ս․ Խուդավերդյան և պատասխանատու քարտուղար բժ․ Ն․ Հակոբյան։ Նույն նիստում Գլխավոր Վարչությունը՝ համաձայն վերջին ընդհանուր ժողովում հայտնած ցանկության՝ վորոշում է ունենալ նախագահության կազմի մեջ մի ազատ անդամ պատասխանատու քարտուղարի պաշտոնով, վորը կարողանա զբաղվել բացառապես միայն Կարմիր Խաչի Ընկերության գործերով, ղեկավարվելով նախագահության վորոշումներով և ցուցմունքներով։

Նախագահության հենց առաջին նիստում օգոստոսի 19-ին պատասխանատու քարտուղար բժ․ Հակոբյանը քաղաքից հեռանալու պատճառով հրաժարվում է այդ պաշտոնից։ Նախագահությունը իր հոկտեմբերի 7-ի նիստում վորոշում է առաջարկել Գլխավոր Վարչությանը հրավիրել այդ պաշտոնի համար բժ․ Վ․ Աղիբեգյանին։ Գլխավոր Վարչությունը իր նոյեմբերի 9-ի նիստում վորոշում է կոոպտացիայի իրավունքով ընտրել բժ․ Վ․ Աղիբեգյանին Գլխավոր Վարչության անդամ և միևնույն ժամանակ ընտրել նրան Նախագահության պատասխանատու անդամ քարտուղար։

Անցնելով գործի՝ նոր Վարչությունը և Նախագահությունը շարունակել է Կարմիր Խաչի աշխատանքները, հետապնդելով Ընկերության հիմնական նպատակները և ժամանակի ու պայմանների առաջադրած նոր խնդիրները։

Գլխավոր Վարչությունը հաշվետարիների ընթացքում ունեցել է 3 նիստ միայն, այն է 1924 թ․ հուլիսի 17-ին, նոյեմբերի 9-ին և 1925 թ․ ապրիլի 4-ին։ Այդ նիստերում նա ընտրել է Նախագահության կազմը և տվել է ընդհանուր վորոշումներ և ղեկավարող ցուցմունքներ ընթացիկ գործերը վարելու համար։ Հետագայում մի քանի անգամ հրավիրվել են նիստեր, բայց չեն կայացել, ուստի ներկայացած հարցերը վճռել է Նախագահությունը։

Նախագահությունը 1924 թ․ ընդհանուր ժողովից հետո մինչև տարվա վերջը ունեցել է 8 նիստ, վորտեղ քննվել են 61 խնդիր։ 1925 թ․ Նախագահությունը ունեցել է 15 նիստ, վորտեղ քննվել են 211 խնդիր։ 1926 թ․ նա ունեցել է 4 նիստ միայն (մարտի 6,20, ապրիլի 13-ին և հոկտեմբերի 23-ին)։ Նիստեր կայացնելը հնարավոր չի յեղել, վորովհետև նախագահը պաշտո-

նական հանձնարարությամբ գտնվում էր արտասահմանում, մյուս անդամները հաճախ և յերկար ժամանակով բացակայել են քաղաքից, իսկ պատասխանատու քարտուղարը Լենինականի աղետի պատճառով հոկտեմբերի 23-ից հետո ամբողջ ժամանակը գտնվել է Լենինականում. այսպիսով քաղաքում չի յեղել անհրաժեշտ quorum-ը նիստ կայացնելու համար: Նիստերը վերսկսել են միայն 1927 թ.: Այդ թվին Նախագահությունը ունեցել է 13 նիստ, որտեղ քննվել են 125 խնդիր: Նախագահության նիստերի զբաղմունքների առարկանները յեղել են հետևյալ կարգերի խնդիրներ՝

1. ընթացիկ վարչական կարգադրություններ, որոնք վերաբերում են Հ. Կարմիր Խաչի գրասենյակին, պահեստին, մանկատանը և զանազան վայրերում գտնված հիմնարկություններին.

2. ֆինանսական և տնտեսական խնդիրներ, որոնք կապված են զանազան վայրերից ստացված ապրանքների, Կարմիր Խաչի հիմնարկությունների կարիքների և առհասարակ Կարմիր Խաչի յել ու մուտքի հետ.

3. Կարմիր Խաչի գործունեությունը ընդարձակելու և նոր հիմնարկություններ բանալու խնդիրները.

4. Հարաբերություններ Խորհրդային Միության Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի մյուս Ընկերությունների հետ և այդ Ընկերությունների Միության Մոսկվայի Գործադիր Կոմիտեյի հետ.

5. Հարաբերություններ արտասահմանյան մասնաճյուղերի և արտասահմանում յեղած ներկայացուցիչների հետ.

6. Հարաբերություններ պետական, հասարակական, պրոֆմիութենական մարմինների հետ այլ և այլ խնդիրներով, որ առաջ եյին գալիս Կ. Խաչի աշխատանքների ընթացքում.

7. Լենինականի յերկրաշարժը և ուրիշ ժողովրդական աղետները և դրանց հետ կապված խնդիրները.

8. Ռազմասանիտարական խնդիրներ և Առաջին Օգնության խմբակների կազմակերպության հետ կապված խնդիրներ:

Կարմիր Խաչի աշխատանքների ընդհանուր կազմակերպական ասպարեզում Գլխավոր Վարչությունը և Նախագահությունը ղեկավարվել են այն հիմնական սկզբունքով, որ ամեն տեղ պետք է աշխատել Կարմիր Խաչի գործունեությունը դնել աշխատավորական լայն մասսաների մասնակցության հողի վրա և ջանալ զարգացնել այդ մասսաների ինքնագործունեությունը և նրանց հետաքրքրությունը դեպի Կարմիր Խաչի ձեռնարկած գործերը, միևնույն ժամանակ կապեր հաստատել և համագործակցել շրջանում գործող բոլոր պետական, հասարակական, արհեստակցական և այլ մարմինների հետ:

Այդ ուղղությամբ Գլխավոր Վարչությունը հրահանգներ է տվել նաև իր մասնաճյուղերին, որոնց գործունեությանը Վարչությունը տվել է առանձին կարևորություն: Մասնաճյուղերի թիվը հաշվետարիների ընթացքում ա-



վելացել է և ներկայումս գոյություն ունեն հետևյալ մասնաճյուղերը. Էջմիածնի, Լենինականի, Նոր-Բայազետի, Մեղրու, Սև-Քարի, Զանգեզուրի, Լոռի Փամբակի, Քեշիշքենդի և Ստեփանավանի:

Կարմիր-Խաչի մասնաճյուղերի աշխատանքներին ավելի զարկ տալու համար Գլխավոր Վարչությունը նպատակ է դրել մասնաճյուղերի գործունեության վերաբերմամբ կիրառել ապակենտրոնացման սկզբունքը, որպեսզի նրանք իրավունք ստանան՝ ընտրելով տեղական Վարչությունները, քննել և հաստատել նրանց աշխատանքների նախագիծը, ինչպես և հաշվետվությունը և որոշ չափով վերահսկել նրանց գործունեությանը: Այսպիսով Գլխավոր Վարչությանը կվերապահվի միայն տեղական մարմինների գործունեության ընդհանուր ղեկավարությունը և վերահսկությունը:

Գալով Հ. Կարմիր Խաչի անդամների թվին, պետք է ասել, որ այդ թիվը մինչև վերջին տարիները յեղել է համեմատաբար փոքր, և Վարչությունը անցյալում հնարավորություն չի ունեցել պետք յեղած ուշադրությունը նվիրելու այդ խնդրին: Ցավ հիրավի, մինչդեռ Խորհրդային Միության մյուս անդամ հանրապետությունների, Ռուսաստանի, Ուկրաինայի, Ադրբեջանի, Վրաստանի և այլ յերկրների Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի ընկերությունների անդամների թիվը հասնում է տասնյակ և հարյուր հազարների և հետզհետե աճում է, Հայաստանի Կարմիր Խաչի անդամների թիվը (հաշվելով և մասնաճյուղերինը) հազիվ հասնում է մի քանի հազարի միայն:

Այդ խնդրով մտահոգված Գլխավոր Վարչությունը 1927 թ. աշնանը հրավիրել է հատուկ պաշտոնյա հրահանգիչ, որը պիտի շրջի Հայաստանի բոլոր վայրերը և արծարծի ժողովրդի լայն մասսաների մեջ Կարմիր Խաչին աջակցություն ցույց տալու և անդամագրությունը ուժեղացնելու խնդիրը:

Պետք է հիշատակել սակայն, որ Հ. Կարմիր Խաչի մասնաճյուղերը իրենց անդամավճարները և այլ յեկամուտները ստանալով՝ ծախսում էյին Կարմիր Խաչի տեղական հիմնարկների կարիքների վրա առանց այդ մասին ժամանակին տեղեկություն տալու Գլխավոր Վարչությանը: Այսպիսով այդ գումարները չէյին անցնում ընդհանուր հաշվառության մեջ: Մինչդեռ Կարմիր Խաչի գործունեության ամբողջական պատկերը ունենալու համար անհրաժեշտ է, որ բոլոր մասնաճյուղերի ունեցած մուտքերը, ինչպես և յելքերը, հաղորդվեյին Գլխավոր Վարչությանը և նրանց ընդհանուր ամփոփումը արձանագրվեր Գլխավոր Վարչության հաշվեմատյանների մեջ:

Արտասահմանում Հ. Կարմիր Խաչը ներկայումս ունի մասնաճյուղեր հետևյալ կենտրոններում. Պարիզում, Բրյուսելում, Լոնդոնում և Նյու-Յորքում: Սակայն արտասահմանի հիշյալ մասնաճյուղերի առթիվ պետք է ասել, որ դրանք հանդիսանում են Կարմիր Խաչի կենտրոնական մասնաճյուղեր այս կամ այն յերկրի համար և պահպանում են կապը Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչության հետ: Բայց նույն յերկրների զանազան քաղաքներում գոյություն ունեն Կարմիր Խաչի տեղական մասնաճյուղեր, որոնք կապված են կենտրո-

նական մասնաճյուղի հետ: Օրինակ Ամերիկայում գրեթե բոլոր կարևոր հայաբնակ գաղութները ունեն Կարմիր Խաչի տեղական մասնաճյուղեր, որոնք կապված են Նյու-Յորքի մասնաճյուղի հետ: Նույնպես և Անգլիայում, Ֆրանսիայում, մի քանի քաղաքներում կազմված են Հ. Կարմիր Խաչի մասնաճյուղեր, որոնք կապված են Լոնդոնի, Փարիզի մասնաճյուղերի հետ:

Բացի մասնաճյուղերից Հ. Կարմիր Խաչը մի քանի տեղերում ունի իր առանձին ներկայացուցիչները, որոնք կատարում են Կարմիր Խաչի հանձնարարությունները և դրանով մեծապես նպաստում են Կարմիր Խաչի աշխատանքներին:

Գալով արտասահմանի գաղութային հայության հետ ունեցած հարաբերություններին Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը, կամենալով ավելի կենդանի կապ հաստատել նրա հետ, ժողովրդականացնել Հ. Կարմիր Խաչի ընկերությունը և այդպիսով արծարծել այդ ընկերությանը ամեն կերպ օգնության գալու անհրաժեշտության գաղափարը, որոշեց հատուկ պատվիրակություն ուղարկել արտասահման: Այդ պատվիրակությունը հանձինս Կարմիր Խաչի նախագահ բժ. Ս. Կամսարականի և միացած Հայաստանի Օգնության Կոմիտեյի (ՀՕԿ) պատվիրակության, այն է ընկ. ընկ. Գր. Վարդանյանի և Կարեն Միքայելյանի հետ՝ ուղևորվեց արտասահման 1925 թվի հոկտեմբերին:

Պատվիրակությունը 14 ամիս անցնելով արտասահմանում՝ այցելեց Բեռլին, Փարիզ և Ֆրանսիայի այլ վայրեր, Բրյուսել, Ժնև, Լոնդոն, Մանչեստր և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների գրեթե բոլոր աչքի ընկնող հայ գաղութները: Բոլոր այցելած վայրերում պատվիրակությունը կատարել է ժողովներ, տվել է կոնֆերանսներ ծանոթացնելով գաղութների հայությանը ընդհանրապես Խորհրդային Հայաստանի վիճակի և մասնավորապես Հ. Կարմիր Խաչի գործունեության, առաջադրած նպատակների և կարիքների հետ: Շնորհիվ պատվիրակության կատարած աշխատանքների արտասահմանյան գաղութների կապերը Հ. Կարմիր Խաչի հետ ավելի սերտ բնույթ ստացան, կազմակերպվեցին նոր մասնաճյուղեր՝ Բրյուսելում, Լոնդոնում, Մանչեստրում, արդեն գոյություն ունեցող մասնաճյուղերը ավելի ամրապնդվեցին և ընդարձակեցին իրանց գործունեությունը: Բացի դրանից կապեր հաստատվեցին նաև արտասահմանում գործող հայկական բարեգործական ընկերությունների հետ:

Հայաստանի Կարմիր Խաչի Ընկերությունը, իբրև Խորհրդային Հանրապետությունների Միության սահմաններում գործող մի մարմին, անմիջական կապ և գործակցություն է հաստատել Խորհրդային Միության մեջ մտնող հանրապետությունների Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների հետ, մասնակցել է 1925 թ. ապրիլի 15-ին Մոսկվայում գումարված Խորհրդային յերկրների Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների ընդհանուր ժողովում և ապա մտել է իբրև անդամ այնտեղ ստեղծված «Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների Միության» մեջ:



Գալով հարաբերություններին Ժնևի Միջազգային Կարմիր Խաչի Կոմիտեյի հետ պետք է ասել, որ Հայաստանի Կարմիր Խաչը de facto ճանաչված է Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեյի կողմից, թեև նա ի թիվս այլ Խորհրդային Կարմիր Խաչերի հնարավորություն չի ունեցել մասնակցելու 1923 թ. օգոստոսին Ժնևում կայացած Կարմիր Խաչերի Միջազգային խորհրդաժողովին, ուր նա հրավիրված եր որպես ինքնուրույն միավոր: Գլխավոր Վարչությունը մտահոգված է յեղել Կարմիր Խաչի Միջազգային Կոմիտեյի կողմից պաշտոնապես ( de jure ) ևս ճանաչվելու խնդրով, և այդ ուղղությամբ նա արդեն հարց է հարուցել 1925 թ. մայիսին Մոսկվայում «Կարմիր Խաչի և Կարմիր Մահիկի Ընկերությունների Միության» Խորհրդի մեջ:

* *
*

Անցնում ենք Հ. Կարմիր Խաչի գործունեությանը 1924—1927 թ. թ. ընթացքում: Այդ առթիվ պետք է ասել, որ իր ամբողջ գործունեության ընթացքում Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը միշտ աշխատել է սերտ կապ պահպանել պետական և հասարակական այն բոլոր մարմինների հետ, որոնք այս կամ այն ձևով զբաղված են իրեն հետաքրքրող խնդիրներով և ուրեմն կարող են օգտակար լինել իրեն: Առանձնապես սերտ կապ նա ունեցել և գործակցել է Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատի հետ:

Հայաստանի Կարմիր Խաչի գործունեությունը 1924—1927 հաշվետարիների ընթացքում արտահայտվել է հետևյալ կերպով:

## Ա. ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԵՐԱՅԻՆ ՅԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ՎՆԱՍՎԱԾ ԱԶԳԱԲՆԱԿՈՒԹՅԱՆԸ

### ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՅԵՐԿՐԱՇԱՐԺԸ

Լենինականի յերկրաշարժի պատճառած սարսափելի ավերումները վերականգնելու և աղետյալներին օգնություն հասցնելու ամբողջ ծանրությունը ստանձնել եր Խ. Հայաստանի կառավարությունը, որը արտակարգ յեռանդով, անձնվիրությամբ և հաջողությամբ առաջ տարավ այդ աշխատանքը, հենվելով այդ խնդրում թե լայն աշխատավորական մասսաների աջակցության վրա, և թե Միութենական Կենտրոնական կառավարության և դաշնակից հանրապետությունների, մասնավորապես Վրաստանի և Ադրբեջանի պատրաստակամ օգնության վրա:

Հայաստանի Կարմիր Խաչը իբրև խորհրդային հասարակական մի հիմնարկություն հարկավ իր պարտքը համարեց նույնպես իր ձեռքից յեկած օգնությունը ցույց տալ աղետյալներին:

1926 թ. հոկտեմբերի 22-ին տեղի ունեցած սարսափելի աղետի լուրը ստանալով Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը հոկտեմբերի 23-ի առավոտյան իր արտակարգ նիստում որոշեց անմիջապես կազմակերպել և

աղետի վայրն ուղարկել բժշկական խումբ վնասվածներին բժշկական և սննդային օգնություն հասցնելու համար: Այդ խմբի կազմակերպումը և ընդհանրապես աղետյալներին օգնություն հասցնելու աշխատանքների ղեկավարությունը Գլխավոր Վարչությունը հանձնեց Նախագահության անդամ և պատասխանատու քարտուղար բժ. Վ. Ադիբեգյանին: Գործը սկսելու համար Նախագահությունը խմբի տրամադրության տակ դրեց 3000 ռ. գումար, միևնույն ժամանակ կարգադրեց փոխադրել իր ունեցած 13 հատ հագուստեղենը և 2 հատ վերմակները:



Լենինականի շրջանը՝ յերկրաշարժից հետո

Հասնելով Լենինական հոկտեմբերի 24-ին՝ բժշկական խումբը անմիջապես զբաղվում և օգնության գործի կազմակերպությամբ: Պետք է ավելացնել, որ աղետի զոհերին օգնելու գործում մանավանդ սկզբի շրջանում խոշոր մասնակցություն ցույց տվեցին Թիֆլիսից յեկած Վրաստանի Կարմիր Խաչի, Ադրբեջանի Կարմիր Մահիկի և Յերկաթուղիների Վարչության Առողջապահական բաժնի բժշկական խմբերը, ինչպես և Յերեվանից վրա հասած Հայաստանի Առժողկոմատի բժշկական խումբը:

Հոկտեմբերի 25-ին առավոտյան Կարմիր Խաչի բժշկական խումբն արդեն Թյուրք Ղարաքիլիսա գյուղն էր: Այստեղ խումբը սարքելով վրաններ պետական սրտակարգ յեռայակից՝ բացեց Կարմիր Խաչի բժշկակայանը և սկսեց իր աշխատանքները: Թեթև վիրավորվածները և հիվանդներն իրանք եյին գալիս կայանը և ստանում պետք յեղած օգնությունը, իսկ ծանր վիրավոր-





Հ. Կ. ԽԱՉԻ Լենինականյան վրանահիվանդանոցը

ներին և հիվանդներին խումբն օգնություն էր հասցնում տեղերում: Խումբն օգնում էր վոչ միայն Թյուրք Ղարաքիլիսայի գյուղացիներին, այլ նաև Արաչլու, Ալեքսանդրովկայի, Բայանդուրի և Դահարլույի բնակիչներին: Այդ շրջանում գտնված միջոցին հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 25-ը խմբի կողմից օգնություն է ցույց տրված 3875 վիրավորների և հիվանդների (Թիվը ցույց է տալիս հաճախումների քանակը):

Բժշկակայանը բանալուց հետո միաժամանակ Կարմիր Խաչի լիազորը ծանոթանալով աղետյալների վիճակին և նրանց կարիքներին և խորհրդակցելով Արտակարգ Յեռյակի հետ վորոշում է բանալ սննդակայաններ և բաժանել տաք հագուստ: Ապա խումբն ավելացնելով իր ունեցած միջոցներին Անդրկովկասյան Կենտգործկոմի նախագահ ընկ. Ս. Խանոյանից ստացված 5000 ռ. կազմակերպում է առաջին սննդակայանը Թյուրք Ղարաքիլիսա գյուղում, վորը և սկսում է գործել հոկտեմբերի 26-ից: Պետք է հիշատակել, վոր այդ գործում խմբին մեծ օգնություն է ցույց տալիս տեղում գտնված կարմիր բանակային զորամասը և նրա պետը, խմբի տրամադրության տակ դնելով 11 չարժական խոհանոցներ, ձիեր և խոհարարներ: Այդ սննդակայանը կազմակերպելուց հետո խումբն անմիջապես ձեռնարկում է յերկրորդ սննդակայանի կազմակերպման գործին: Յերկրորդ սննդակայանի համար ընտրվեց Դավշան-Ղշլաղ գյուղը, և սննդակայանն արդեն սկսեց գործել նոյեմբերի 5-ից:

Այս յերկու կայաններում պատրաստվում էր տաք կերակուր մսով և չարժական խոհանոցների միջոցով բաժանվում էր հետևյալ գյուղերում. Թյուրք Ղարաքիլիսա, Բայանդուր, Արալըխ, Դավշան-Ղշլաղ, Ղազարապատ, Սվանվերդի, Գյոլ-Ալի: Սկզբում բաց էր թողնվում միայն օրական 1100 ճաշ, իսկ հետագայում հետզհետե ավելանալով ճաշերի թիվը հասավ 6000-ի:

Մեր սննդակայանները գյուղերում գործում էին հոկտեմբերի 26-ից մինչև նոյեմբերի 25-ը և այդ մի ամսվա միջոցին բաց է թողնված ընդամենը 148,451 ճաշ: Սկզբի շրջանում, յերբ գյուղերում հաց չէր կարելի գտնել, ճաշի հետ տրվում էր նաև հաց, բայց հետագայում, յերբ հնարավոր յեղավ տեղերում հաց թխել, հացի մատակարարումը դադարեցվեց, և դրա փոխարեն ավելացվեց ճաշերի քանակը: Սննդակայանների ներկայացրած տեղեկագրերի մեջ կան մանրամասն տվյալներ յուրաքանչյուր գյուղին բաց թողնված ճաշերի մասին սկսած հոկտեմբերի 26-ից մինչև նոյեմբերի 25-ը:

Նոյեմբերի 25-ին, յերբ գյուղացիք արդեն բացօդյա դրությունից անցան գետնափոր տնակների մեջ, Կարմիր Խաչի բժշկական խումբը համաձայն յերկրակացության, վորին յեկան Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատի, Ադրբեջանի Կարմիր Մահիկի Ընկերության, Հայաստանի Կարմիր Խաչի, Ամերիկական Կոմիտեյի և Լենինականի Գավգործկոմի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցած մի շարք խորհրդակցությունները, փակեց իր սննդակայանը գյուղական վայրերում և փոխադրեց իր գոր-





Հ. Կ. ԽԱՉ Կաթի մատակարարումը Լենինականում

ծունեցությունը Լենինական քաղաքը, ուր աղքատ և աշխատանքից զրկված բնակչությունը գտնվում էր շատ ծանր վիճակում:

Լենինականում Հ. Կարմիր Խաչը ձեռնարկեց կազմակերպելու մի սննդակայան 3000 հոգու համար և մի կաթի խոհանոց 500 ծծկեր յերեխաների համար: Այդ նպատակով Հ. Կարմիր Խաչը կառուցեց յերկու փայտե բարաք, որոնցից մեկը 4 սենյակից՝ պահեստի, գրասենյակի, կաթնատան և բնակության համար, իսկ մյուսը յերկու բաժանմունքից, այն է խոհանոց 3000 հոգու ճաշ պատրաստելու համար և կաթի խոհանոց: Դեկտեմբերի 2-ին սկսում է գործել սննդակայանը, իսկ 14-ին կաթի խոհանոցը: Ճաշերը բաց էին թողնվում ընտանիքներին սոց. ապահովագրության և պրոֆ. միությունների կողմից ներկայացրած ցուցակներով: Սկսելով դեկտ. 2-ին ճաշերի մատակարարումը 529 հոգու, հետագա 5—10 օրերին հասցրին մինչև 2500 հոգու իսկ հետո մինչև 3000-ի, և այդպես շարունակվում էր մինչև սննդակայանի փակումը:

Իսկ կաթի խոհանոցը սկսելով 14 դեկտեմբերի, օրական կես լիտր 325 բաժին կաթի մատակարարումով, հետևյալ օրերին հասցրեց մինչև 550—600 բաժին: Կաթը բաժանվում էր ծծկեր և մինչև 2 տ. յերեխաներին: Իսկ ճաշը տրվում էր ամեն օր. ճաշը բաղկացած էր տաք սուպից մսով և հացից: Ամեն օր ճաշ ստացողների 50 տոկոսը կազմում էին 2-ից մինչև 12 տարեկան յերեխաները, ցուցակներով 1508 հոգի, իսկ 50 տոկոսը՝ 12 տարեկանից վեր յերեխաները և հասակավորները—ցուցակներով 1538 հոգի, ընդամենը 3046 հոգի:

1926 թվի դեկտեմբերի 2-ից մինչև 1927 թվի մայիսի 1-ը Լենինականում բաց է թողնված 295,303 ճաշ. իսկ աչքի առաջ ունենալով վերևում ցույց տված հոկտեմբերի 25-ից մինչև նոյեմբերի 25-ը շրջանի աղետյալ գյուղերում բաց թողնված ճաշերի թիվը, կարող ենք ասել, որ Հ. Կարմիր Խաչի կողմից Լենինականի գյուղերում և քաղաքում ցույց տված ամբողջ սննդային օգնությունն արտահայտվել է 443,764 ճաշերով հացի հետ:

Կաթ բաց է թողնված 1926 թ. դեկտեմբերի 14-ից մինչև 1927 թ. մայիսի 1-ը 66,922 բաժին: Ծծկեր և մինչև 2 տարեկան յերեխաներ ցուցակագրված են 620 հոգի:

Անկախ վերոհիշյալից Հ. Կարմիր Խաչը բաց է թողել Բայթարլու գյուղի մանկապարտեզին չքավոր գյուղացիների յերեխաների նախաճաշիկի համար կակաո, շաքար և դրամ մինչև 1927 թ. մայիս ամիսը:

Բացի այս բոլորից Հ. Կարմիր Խաչը Լենինականում նպաստ է տվել տեղական Անապաստան Յերեխաների Բարեկամների Ընկերությանը: Իսկ հետագայում խիստ սանհամանքների պատճառով անապաստան յերեխաներից 25 հոգի տեղափոխված են Յերևան Կարմիր Խաչի մանկատունը:

1927 թ. հունվարի վերջին Հ. Կարմիր Խաչի Նախագահությունն ամբողջ կազմով գալով Լենինական և ծանոթանալով դրության հետ՝ որոշեց սաստիկ



ցրտերի պատճառով բանալ քաղաքում յերկու ձրի թեյարան: Այդ որոշման համաձայն առաջին թեյատունը բացվեց փետրվարի 13-ին: Դրանից օգտվում էին շրջանում ապրող չքավոր ժողովրդի մի մասը և գլխավորապես սնունդ և կաթ ստացողները և անցորդ գյուղացիները: Մինչև փետրվարի վերջը թեյատունը բաց է թողել 11534 բաժին (մոտ 2 բաժակ) քաղցր թեյ:

Յերկրորդ թեյատունը բացվել է փետրվարի 23-ին քաղաքի մյուս ծայրում (շուկայի մոտ), որտեղից անցնում էր մի շարք գյուղերի ժողովուրդը: Թեյատնից օգտվողների 50 տոկոսը կազմում էր գյուղացիությունը, մնացածը քաղաքի չքավորները, աշխատանքի գնացող բանվորները և աշակերտները: Թեյատունը մինչև փետրվարի վերջը բաց է թողել 4058 բաժին թեյ, իսկ մարտ ամսվա ընթացքում յերկու թեյատները բաց են թողել 69643 բաժին թեյ: Մարտի վերջին յերկու թեյատներն էլ փակվեցին:

Գալով հագուստեղենի և այլ իրեղենների բաշխմանը աղետյալներին, պետք է ասել, որ վերը հիշված 15 հակ հագուստեղենը, վերմակները, գուլպաներն ու կտորները բաժանվել են չքավորներին և աշակերտությանը թե քաղաքում և թե գյուղերում, համաձայն ներկայացրած պաշտոնական ցուցակների: Հետագայում Կարմիր Խաչի արտասահմանում գտնված մասնաճյուղերից և զանազան բարեգործական հիմնարկություններից ինչպես և Խորհ. Միության զանազան վայրերից ստացված հագուստեղենը, կոշիկները և այլ իրերը հետզհետե բաժանվում էին աղետյալներին:

Այստեղ պետք է հիշատակել նաև Ամերկոմի ցույց տված օգնությունը Հ. Կարմիր Խաչին Լենինականի յերկրաշարժի առթիվ: Այդ կոմիտեյի ընդհանուր դիրեկտոր քաղաքացի Բիչը թե ինքն անձամբ և թե յերեք հատուկ նշանակված ամերիկուհի պաշտոնյաների միջոցով ծանոթանալով յեղած կարիքներին և Կարմիր Խաչի կողմից կազմակերպված աշխատանքներին՝ 1927 թ. փետրվարին հրավիրեց հատուկ խորհրդակցություն, որը գտնելով աղետյալների օգնության գործի յեղած կազմակերպությունը միանգամայն բավարար, որոշեց Ամերկոմի տրամադրության տակ յեղած գումարներից 10,000 դոլլար տրամադրել Հ. Կարմիր Խաչին իր հետագա աշխատանքների համար: Այդ գումարը մեծապես նպաստեց Հ. Կարմիր Խաչին շարունակելու իր աշխատանքները Լենինականում հետագա ամիսների ընթացքում մինչև հոկտեմբերի 1-ը:

Ապրիլի 30-ին Հ. Կարմիր Խաչի սննդակայանը և կաթի խոհանոցը Լենինականում փակվում են, և մայիսի 1-ին այնտեղ բացվում է կոնսուլտացիա, որտեղ տրվում էր բժշկական օգնություն և բաց էին թողնվում կաթ և այլ տեսակի սնունդ ծծկեր յերեխաներին:

Կոնսուլտացիան գործում է մինչև 1927 թ. հոկտեմբերի 1-ը: Այդ ժամանակամիջոցում կոնսուլտացիան հաճախել են 237 հիվանդ յերեխա առաջին անգամ և 882 յերկրորդ անգամ: Ծաղկի պատվաստում կատարվել է 1060 յերեխայի: Յերեխաներին բաժանված է մաքուր կաթ—6942 կիլո, մաննայա կաշա—1006 կիլո, խառնուրդ 1647 կիլո: Հոկտեմբերի մեկին կոնսուլտացիան փակվում է:

Պետք է հիշատակել այստեղ և այն ոգնությունը, վոր ցույց է տվել Հայաստանի Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը Դիլիջանի ազգաբնակությանը 1927 թ. ոգոստոսի 18-ին, այնտեղ տեղի ունեցած հեղեղի առթիվ: Անմիջապես աղետի մասին տեղեկություն ստանալուց հետո Գլխավոր Վարչությունը գործուղեց Դիլիջան վարչության պատասխանատու քարտուղար բժ. Վ. Աղիբեգյանին, լիազորելով նրան ծանոթանալ ազգաբնակության կրած վնասների չափին և պետք յեղած ոգնությունը կազմակերպել տեղումը:

Այդ միջոցին այնտեղ արդեն կառավարության կողմից կազմակերպված եր արտակարգ յեռյակ հանձնաժողով:

Գալով Դիլիջան՝ բժ. Վ. Աղիբեգյանը խորհրդակցություն է ունենում արտակարգ հանձնաժողովի հետ, վորտեղ և մշակվում են մի շարք միջոցներ աղետյալներին ոգնություն հասցնելու համար: Հետո նա Յերևանից պահանջում է վերմակներ, պատրաստի շորեր, կտորներ և սպիտակեղեն, վորոնք և Գավգործկոմի ցուցմունքների համաձայն բաժանվում են աղետյալներին: Աղետյալներին բաժանվում է նաև ալյուր:

Տարերային աղետների առթիվ ցույց տված ոգնության մասին խոսելիս պետք է հիշատակել նաև, վոր Հ. Կարմիր Խաչն աշխատել է իր միջոցների թույլ տված սահմաններում ոգնության հասնել նաև Խորհրդային Միության ուրիշ հանրապետությունների մեջ տեղի ունեցած աղետների զոհերին, ինչպես Ադրբեջանի, Վրաստանի, Ուզբեկստանի, Բելոռուսիայի և Ղրիմի աղետյալներին:

## Բ. ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆ ՅԵԿՈՂ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻՆ

1925 թ. հոկտեմբերին Հունաստանից և Պոլսից սպասվող գաղթականների գալու առթիվ Հ. Կարմիր Խաչի Վարչությունը կազմակերպել է Դավալուի գյուղում, վորը ընտրված եր նրանց համար իբրև բնակության վայր, մի բժշկակայան և հետո 1926 թ. մարտին ստիպված ստեղծված պայմաններից նաև մի հիվանդանոց 15 մահճակալով:

Հիվանդների շարժումը Դավալուի բժկայանում.

1925 թ. նոյեմբեր ու դեկտեմբեր ամիսներին բժշկական ոգնության է հասցված զանազան հիվանդություններով.

| | ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՃԱԽՈՂ | ԿՐԿՆԱԿԻ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| | 837 | 1562 | 2399 |
| 1926 թ. մինչև հուլիսի վերջը | 1761 | 2733 | 4494 |

Հետագայում, յերբ գաղթականների համար մշտական բնակության վայր վորոշվեց Արազդայանի շրջանը, գաղթականական հիվանդանոցը տեղափոխվեց Արազդայան գյուղը: Այս հիվանդանոցին կից բացվեց նաև մանկաբարձական բաժանմունք: Այդ հիվանդանոցն աշխատում է մինչև այսօր:



1003
13843

## ԱՐԱԶԴԱՅԱՆԻ ԲԺԿԱՅԱՆԻ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՇԱՐԺՈՒՄԸ

| | ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՃԱԽՈՂ | ԿՐԿՆԱԿԻ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| 1926 թ. հուլիսից մինչև 31 դեկտեմբերի | 856 | 733 | 1589 |
| 1927 թ. | 1504 | 6861 | 11362 |
| այդ թվում մալարիկ | 1320 | 1101 | 2421 |

Արազդայանի ստացիոնարը 1926 թ. հուլիսից մինչև տարվա վերջը ընդունվել են 180 հիվանդ, վորոնք ունեցել են 1340 հիվանդանոցային որեր, 1927 թ. ընդունվել են 163 հիվանդ, վորոնք ունեցել են 1732 մահճակալ. որեր:

Բացի հիվանդներին բժշկական ոգնություն ցույց տալուց վերոհիշյալ բոլոր գաղթականները ամառվա ամիսներին յենթարկված են պրոֆիլակտիկ քինինիզացիայի:

Պետք է ավելացնել, վոր 1927 թ. բերքի պակասության պատճառով Արազդայանի գաղթականներին բաժանվել է մի վագոն ալյուր:

## Գ. ՊԱՅՔԱՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԽՏԵՐԻ ԴԵՄ

### ա. Մալարիա

Մալարիա հիվանդությունը, վորը դարերից ի վեր բույն է դրել Հայաստանում և քայքայելով ժողովրդի առողջությունը, արգելք է հանդիսացել յերկրի տնտեսական վերականգնմանը, իբրև մի սոցիալական չարիք, գրավել է Հ. Կարմիր Խաչի առանձին ուշադրությունը: Մալարիայի հետ միաժամանակ խոշոր չարիք են ներկայացնում Հայաստանի համար նաև մյուս տրոպիկական հիվանդությունները, ինչպես դիզենտերիա, մալտիան տենդ, և աղիքների այլ և այլ հիվանդություններ (ճիճուներից առաջացած):

Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը թե մալարիայի և թե մյուս տրոպիկական հիվանդությունների դեմ պայքարելու համար վորոշում է յերկրի ամենավտանգված վայրերում բանալ մի շարք տրոպիկական բժշկակայաններ: Կարմիր Խաչի տրոպկայանները այդ կողմից վորոշ չափով լրացնում են Հայաստանի Առողջապահության Ժողովրդական Կոմիսարիատի աշխատանքները այդ հիվանդությունների դեմ տարվող պայքարի գործում:

Տրոպկայանների միջոցով մալարիայի դեմ տարվող պայքարը ընդհանուր առմամբ ընդգրկում է հետևյալ աշխատանքները. զուտ բժշկական, պրոֆիլակտիկ, սանիտար-կրթական, և գիտական-հետազոտական:

Այդպիսի տրոպկայաններ Հայաստանի սահմաններում Հ. Կարմիր Խաչի կողմից կազմակերպված են և գործում են յերեքը. 1) Եջմիածնում, 2) Մեղրիում և 3) Դարալագյազի Արփա գյուղում:

Առաջին տրոպկայանը բացվել է Եջմիածնում: Դեկ. 1923 թ. Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչության կողմից կազմված յերկու բժշկական խմբերը գործելով Եջմիածնի գավառի Սամաղարի և Զանգիբասարի շրջաններում, գյուղացիներին բժշկական ոգնություն հասցնելու հետ միաժամանակ կատարել եյին այնտեղ նաև բազմաթիվ գիտական հետազոտություններ մալարիայի տարածման վերաբերմամբ և գտել եյին, վոր Եջմիածնի գավառը մալարիայի տեսակետից ամենավտանգված գավառներից մեկն է:

Մալարիան այդ շրջանում ավելի է սաստկանում ու սուր կերպարանք է ընդունում դաշտային աշխատանքների ժամանակ, այսպիսով մեծ վնաս հասցնելով գյուղացիական տնտեսությանը:



Հ. Կ. ԽԱՉ. Եջմիածնի տրոպկայանը

Աչքի առաջ ունենալով այս պայմանները, Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը վորոշում է հաջորդ տարում մալարիայի դեմ պայքարը կազմակերպել ավելի գիտական հիմունքներով: 1924 թ. Գլխ. Վարչությունը շնորհիվ Ամերիկայի իր մասնաճյուղի ուղարկած նպաստների գավառի կենտրոնում՝ Եջմիածնում կազմակերպում է տրոպիկական հիվանդությունների բժշկակայան 10 մշտական մահճակալով, լաբորատորիայով և ամբուլատորիայով:

Տրոպկայանը սպասարկում է Եջմիածնի գավառի Զանգիբասարի և Սամաղարի շրջանների մոտ 30000 ազգաբնակությանը:



Սկսելով իր գործունեությունը 1924 թ. հունիսի 1-ին այս տրոպկայանը առաջին հերթին անցնում է հետազոտական աշխատանքների և պարզում է տեղական մալարիայի բնույթը, նրա տարածման շրջանները և այն պատճառող մոծակների տեսակները: Ամառվա ընթացքում հետազոտման է յենթարկվել մի քանի վայրերի ամբողջ ազգաբնակչությունը, վորի շնորհիվ պարզվել է, վոր մալարիան շրջանում տարածված է 100%-ով:

Հիվանդներին բժշկական ոգնություն եր ցույց տրվում տրոպկայանի ամբուլատորիայում: Բացի դրանից տրոպկայանին կից կազմակերպված եյին չորս շրջիկ մալարիական խմբեր, վորոնք մալարիայի սաստկացման միջոցներին դուրս եյին գալիս շրջանները, ստանալով տրոպկայանից անհրաժեշտ ցուցմունքներ, դեղորայք և այլ պարագաներ:

Եջմիածնի տրոպկայանի հիվանդների շարժումը 1924 թ. հունիսից մինչև տարվա վերջը ներկայացնում է հետևյալ պատկերը.

| | ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՃԱԽՈՂ | ԿՐԿՆԱԿԻ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| | 2869 | 10782 | 13651 |
| Այդ թվում մալարիայով հիվանդներ | 2447 | 10575 | 13022 |

Շրջիկ խմբերը աշխատել են հետևյալ վայրերում. Զեյվայի շրջան, Խաթունարխի շրջան, Ղարխունի և Փարաքարի:

Հիվանդների շարժումը այդ շրջաններում հետևյալն եր.

| | ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՃԱԽՈՂ | ԿՐԿՆԱԿԻ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| Զեյվայի խումբ | 4318 | 4851 | 9169 |
| այդ թվում մալար. | 1923 | 4137 | 6060 |
| Խաթունարխի խումբ | 4139 | 5748 | 9887 |
| այդ թվում մալարիկ | 1425 | 4247 | 5672 |
| Ղարխունի խումբ | 1091 | 2014 | 3105 |
| այդ դվում մալարիկ | 701 | 1631 | 2332 |
| Փարաքարի խումբ բոլորը մալարիկներ | 1435 | 3088 | 4523 |

Ամփոփելով ի մի թե տրոպկայանի և թե շրջիկ խմբերի հիվանդների շարժումը 1924 թ. հունիսից մինչև տարվա վերջը կստանանք հետևյալ պատկերը.

| | ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՃԱԽՈՂ | ԿՐԿՆԱԿԻ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| | 13852 | 26483 | 40335 |
| այդ թվում մալարիկ. | 7931 | 23678 | 31609 |

Այսպիսով տրոպկայանին և նրա շրջիկ խմբերին 1924 թվին դիմել են 7931 մալարիկ հիվանդ, վորոնք հաճախել են 31609 անգամ: Բացի դրանից զանազան այլ տրոպիկական հիվանդություններով դիմել են 5921 հոգի, վորոնք ունեցել են 8826 հաճախում:

Տրոպկայանի ստացիոնարը 1924 թվին ունեցել է 77 մալարիկ հիվանդ, 1384 մահճակալային օրեր:

Բացի բուժական աշխատանքներից տրոպկայանը և իր հետ կապված խմբերը զբաղվել են նաև հետազոտական պրոֆիլակտիկ աշխատանքներով դպրոցներում, մանկական համայնքներում, բնակելի վայրերում և շրջանում գտնված զանազան ձեռնարկություններում: Եվ այդ աշխատանքների հետևանքներով նրանք ձեռնարկում էյին զանազան միջոցների շրջանի առողջապահության համար: Օրինակ գարնանը հսկում էյին վարարման ջրերին, գյուղացիների միջոցով չորացնել էյին տալիս ճահճուտները և այլն: Պրոֆիլակտիկ նպատակով կատարվում էր նաև մի քանի շրջանների բնակչության ամբողջ խմբերի քինինիզացիա: Այսպիսով քինինիզացիայի յենթարկվել են Էջմիածնի տրոպկայանի միջոցով Վաղարշապատի ծառայողները, Նոր Եվդոկիա գյուղում բնակվող Հունաստանից և Պոլսից յեկած գաղթականները, Այգր Լիճի ծառայողների և բանվորների մի մասը:

Առհասարակ պրոֆիլակտիկայի վերաբերմամբ գլխավոր ուշադրությունը դարձվել է բնակչության ինքնագործունեության զարգացման վրա: Այդ նպատակով բոլոր գյուղերում պարբերաբար տրվել են դասախոսություններ և զրույցներ մալարիայի, նրա ծագման և նրա դեմ մաքառելու միջոցների մասին, ինչպես և առհասարակ զանազան վարակիչ հիվանդությունների և առողջապահության վերաբերյալ խնդիրների մասին:

Տրոպկայանի լաբորատորիան լավ կահավորված է և ունի բոլոր անհրաժեշտ պարագաները հետազոտությունների համար: Լաբորատորիան 1924 թվի 7 ամսվա ընթացքում հետազոտել է 1453 հիվանդ, ուսումնասիրել է մոծակների տեսակները և դրա հետ կապված գիտական խնդիրները, և յուր ուսումնասիրության հետեվանքները ցուցադրել և պարզաբանել է տրոպկայանի հաճախորդներին: Տրված դասախոսությունների և զրույցների թիվը 1924 թվին յեղել է 29, ունկնդիրների թիվը 1488:

1925 թ. Էջմիածնի տրոպկայանին կից փոխանակ նախորդ տարվա 4 խմբերի, աշխատում էյին 6 շրջիկ խումբ հետեվյալ գյուղերի շրջաններում՝ Ն. Խաթունարխ, Փարաքար, Ջեյվա, Սարվանլար, Ղարաղշլաղ և Սամաղար:

Լաբորատորիան 1925 թ. ավելի ճոխացված է: Սանկրթական աշխատանքները ավելի առաջ տանելու համար ձեռք են բերված զանազան նկարներ և մի մոգական պատկեր բազմաթիվ դիապոզիտիվներով, վորոնք լուսաբանում են մալարիայի, վեներական և այլ վարակիչ հիվանդությունների ծագումը և զարգացումը: Դասախոսություններ ու զրույցներ տրվում էյին թե բուժական հիմնարկությունների դահլիճներում և թե ուրիշ հիմնարկություններում, հաճախ նաև շրջանի այլ և այլ վայրերում: Տրված դասախոսությունների թիվը 1925 թ. յեղել 77, ունկնդիրների թիվը—6088:

Տրոպկայանի բժշկական կազմը թե վորակով և թե քանակով բարձրացված է: Տրոպկայանի բժշկական օգնության դիմողների քանակը նույնպես



այդ թվին ավելացել է: Էջմիածնի տրոպկայանի և իր կից գործող խմբերի մալարիկ հիվանդ առաջին հաճախորդների թիվը 1925 թ. յեղել է 7408 անձ

կրկնակի հաճախորդների 33211 »

ընդամենը 40619 անձ.

Զանազան այլ հիվանդություններով առաջին և կրկնակի հաճախորդներ 1925 թ. յեղել են 8224 անձ:

1925 թ. ընթացքում տրոպկայանի լաբորատորիան կատարել է 3943 հետազոտություններ:

Տրոպկայանի ստացիոնարը 1925 թվին ունեցել է 147 մալարիկ հիվանդ և 96 ուրիշ տրոպիկ. հիվանդություններով, ընդամենը 2628 մահճակալ. օրեր:

1926 թվին տրոպկայանին կից գործող բժշկական խմբերի թիվը դարձյալ յեղել է չորս:

Այդ թվին տրոպկայանի և իր կից գործող խմբերի առաջին անգամ հաճախող մալարիկ հիվանդների թիվը յեղել է 8614 հոգի.

Կրկնակի հաճախորդներ 39555 հոգի.

Ընդամենը 48169 հոգի.

Ուրիշ հիվանդություններով տրոպկայանի ամբուլատորիան դիմել են 1926 թ. 3458 հ.:

Տրոպկայանի լաբորատորիան 1926 թ. կատարել է 4857 հետազոտություն:

Ստացիոնարը նույն թվին ունեցել է 194 մալարիկ հիվանդ և 151 ուրիշ հիվանդություններով, գլխավորապես աղիքային վորդերի հիվանդությամբ:

Տարվա ընթացքում տրոպկայանը տվել է 204 դասախոսություն և զրույց, ունենալով 16911 ունկնդիր:

1927 թ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը աչքի առաջ ունենալով, վոր շրջանում բժշկական օգնության կարիքն ավելանում է, և բժշկական խմբերի հասցրած օգնությունը ավելի արդյունավետ դարձնելու նպատակով վորոշեց փոխանակ տրոպկայանին կից գործող շրջիկ խմբերի բանալ մնայուն բուժակակայաններ շրջանի մի քանի գյուղերում, այն է Ն. Խաթունարխում, Թյուրքմենլիում, Նոր Եվդոկիայում և Ջեյվայում, վորտեղ կարելի կլինի կատարել թե բժշկական և թե պրոֆիլակտիկ աշխատանքներ:

Այդ բուժակայանները աշխատում են Էջմիածնի տրոպկայանի ընդհանուր ղեկավարության և հսկողության տակ: Այդ պատճառով 1927 թվի համար մենք տալիս ենք հիվանդների շարժման առանձին առանձին թվեր Էջմիածնի տրոպկայանի և հիշված բուժակայանների համար: Դրանով ե բացատրվում Էջմիածնի տրոպկայանում 1927 թվին ընդունած հիվանդների թվի առերևույթ նվազումը:

1927 թվին Էջմիածնի տրոպկայանի հիվանդների շարժումը յեղել է․

| | ԱՌԱՋԻՆ | ԿՐԿՆԱԿԻ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| | 3971 | 21943 | 25914 |
| այդ թվում մալարիկ | 2564 | 20602 | 23166 |

Ներքին Խաթունարխի բուժակայանը բացվել է 1926 թ․ հուլիսի սկզբին և սպասարկում է շրջանի մոտ 14000 բնակչությունը։ Հուլիսի սկզբից մինչև տարվա վերջը այդ բուժակայանը ընդունել է 12088 մալարիկ հիվանդներ և 3594 ուրիշ հիվանդություններով, ընդամենը 15626 հիվանդ։ Կատարվել են նաև պրոֆիլակտիկ աշխատանքներ, ինչպես և տրվել են 74 դասախոսություն և զրույց 3738 ունկնդիրներով։

Հիվանդների շարժումը 1927 թ․

| | ԱՌԱՋԻՆ | ԿՐԿՆԱԿԻ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| | 8066 | 23451 | 31517 |
| այդ թվում մալարիկ | 3877 | 16795 | 20672 |

Հիվանդների շարժումը ԹՅՈՒՐՔՄԵՆԼԻԻ բուժակայանում 1927 թ.

| ՄԱԼԱՐԻԱ | | ԶԱՆԱԶԱՆ ՀԻՎԱՆԴ. | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| առաջին | կրկնակի | | |
| 799 | 4545 | 3749 | 9093 |

ՆՈՐ ՑԵՎԴՈԿԻԱՅԻ բուժակայանում 1927 թ. հուլիսից մինչև տարվա վերջը.

| ՄԱԼԱՐԻԱ | | ԶԱՆԱԶԱՆ ՀԻՎԱՆԴ. | ԸՆԴԱՄԴՆԸ |
|---|---|---|---|
| առաջին | կրկնակի | | |
| 1006 | 4149 | 1969 | 7124 |

ՋԵՅՎԱՅԻ բուժակայանում 1927 թ. հուլիսից մինչև տարվա վերջը․

| ՄԱԼԱՐԻԱ | | ԶԱՆԱԶԱՆ ՀԻՎԱՆԴ. | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| առաջին | կրկնակի | | |
| 850 | 5726 | 3899 | 10475 |

Էջմիածնի տրոպկայանի լաբորատորիան 1927 թ․ կատարել է 5621 հետազոտություն։

Տրոպկայանի ստացիոնարը 1927 թ․ ունեցել է 222 մալարիկ հիվանդ, 2342 մահճակալային օրեր։

Տարվա ընթացքում տրոպկայանը տվել է 250 դասախոսություն և զրույց, ունենալով 16176 ունկնդիր։

Այսպիսով Էջմիածնի տրոպկայանը վոչ միայն մի օրինակելի բուժական հիմնարկություն է, այլև նա հանդիսանում է տրոպիկական հիվանդությունների ուսումնասիրության մի գիտական կենտրոն Էջմիածնում։



Հետեվյալ վայրը, վորը իր վրա գրավեց Կարմիր Խաչի Գլխ. Վարչության ուշադրությունը, Մեղրու շրջանն եր, իբրեվ յերկրի ամենահեռավոր և խուլ ծայրագավառներից մեկը։ Դա մի հիվանդոտ վայր է, առանձնապես մալարիայով վարակված։

1923 թ. դեկտեմբերին Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը այնտեղ կազմակերպում է իր մասնաճյուղը, իսկ 1924 թ. հունվարին բաց է անում Մեղրի գյուղում բժկայան։

Այդ բժկայանը 1924 թ. ունեցել է 7239 այցելու հիվանդ (հաճախում), վորոնցից 2361 հոգի մալարիկ։ 1925 թվի գարնանը Հ. Կարմիր Խաչի Գլխ. Վարչությունը վորոշում է վերածել այդ բժկայանը տրոպկայանի, Էջմիածնի տրոպկայանի օրինակով և նույն նպատակներով, վորը և սկսում է իր գործունեությունը նույն թվի մայիսի վերջերում։ Սակայն լինելով միակ բժշկական հիմնարկությունը ամբողջ շրջանի համար, Մեղրու տրոպկայանը մալարիայի սեզոնից դուրս բացի մալարիայի վերաբերյալ աշխատանքներից կատարում եր նաև ընդհանուր տիպի գյուղական հիվանդանոցի դեր, ունենալով նույնպես ստացիոնար և մանկաբարձական բաժանմունք։

Մեղրու ազգաբնակությունը, ինչպես և Գավգործկոմը, Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությանը ընդառաջ գնալու նպատակով հիվանդանոցի կարիքների համար Կարմիր Խաչի տրամադրության տակ դրեց գյուղի ամենահարմար տունը, վորի հիմնական վերանորոգման և կահավորման ծախքը իր վրա վերցրեց Կարմիր Խաչը։

Մեղրու տրոպկայանը սպասարկում է Մեղրու գավառի 24 գյուղ, վորոնցից 14 դաշտային և 10 լեռնային, ընդհանուր առմամբ մոտ 8000 ազգաբնակությամբ։ Բուժական աշխատանքը շրջանում 1925 թ. կատարում եր տրոպկայանի ամբուլատորիան։ Բացի դրանից ամառը մալարիայի սեզոնին տրոպկայանին կից կազմվել եյին յերկու շրջիկ բժշկական խմբեր, վորոնք գործում եյին Լեհվազ և Շվանիձոր գյուղերում։ Խմբերը շարունակում եյին գործել նաև 1926 և 1927 թվերին։

Հիվանդների շարժումը տրոպկայանում և նրան կից աշխատող խմբերում։

| | ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՃԱԽՈՂ | ԿՐԿՆԱԿԻ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| 1925 թ. | 6295 | 11177 | 17472 |
| այդ թվում մալարիկ | 1958 | 6750 | 8708 |
| 1926 թ. | 6653 | 9846 | 16499 |
| այդ թվում մալարիկ | 1105 | 6959 | 8064 |
| 1927 թ. | 1763 | 5343 | 7106 |
| այդ թվում մալարիկ | 648 | 3698 | 4346 |

Բացի մալարիայից շրջանում տարածված են աղիքային հիվանդություններ։ Բնակչության գրեթե 100% տառապում է ճիճուներով։ 1925 թվին լաբորատորիան կատարել է 1931 հետազոտություն, 1926 թվին 2717, 1927 թվին 1481։

Պրոֆիլակտիկ աշխատանքների բնագավառում շրջանի բազմաթիվ ճահիճները և լճակները չորացնելու նպատակով տրոպկայանը 1925 թ. առաջարկեց գավգործկոմին զբաղվելու վոռոգման կանոնավորման հարցով: Գավգործկոմը հրատարակեց պարտադիր վորոշում, վորով յուրաքանչյուր գյուղացի պարտավորվում է չորացնել իր հողերի վրա գոյացող ճահիճները և առհասարակ կանգնած ջրերը:

Տրոպկայանը զբաղվել է նաև սանկրթական աշխատանքներով: Այդ նպատակի համար տրոպկայանը ունի մոգական լապտեր և այլ հարմարություններ: Աշխատանքները կատարվում եյին թե Մեղրիում և թե շրջանի մյուս գյուղերում, վորտեղ կազմակերպվում եյին դասախոսություններ և զրույցներ զանազան հարցերի շուրջը: 1925 թ. տրոպկայանի կողմից կազմակերպված են 63 դասախոսություն և զրույց, 2868 ունկնդիրներով. 1926 թ. 57 դասախոսություն, 3533 ունկնդիրներով, իսկ 1927 թ. 45 դասախոսություն և զրույց 3211 ունկնդիրներով:

Եջմիածնի և Մեղրու շրջաններից հետո մալարիայի տեսակետից ամենից վտանգված վայր եր համարվում Դարալագյազի գավառի Արփա գյուղի շրջանը, վորի բնակիչների 86% վարակված է մալարիայով: Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը 1924 թ. կազմակերպելով այստեղ իր մասնաճյուղը՝ փոխադրում է այստեղ Կոտայքի շրջանի Քանաքեռ գյուղի իր բժկայանը, վորը և սկսում է աշխատել նույն թվի հոկտեմբերից:

1924 թ. հոկտեմբերի 1-ից մինչև տարվա վերջը բժկայանի հիվանդների շարժումը հետևյալն եր՝

| | ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՃԱԽՈՂ | ԿՐԿՆԱԿԻ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| | 576 | 559 | 1135 |
| այդ թվում մալարիկ | 187 | 202 | 389 |

Աչքի առաջ ունենալով մալարիայի մեծ ծավալումը այդ շրջանում՝ Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը վորոշում է այստեղ ևս ունենալ Եջմիածնի տիպի տրոպկայան 10 մշտական մահճակալով, ամբուլատորիայով և լաբորատորիայով: Արփա գյուղի բնակչությունը այդ նպատակով տրամադրում է յերկու կիսաշեն տուն, վորոնք Գլխավոր Վարչությունը նորոգում է և կահավորում: Այսպիսով 1925 թ. սեպտեմբերի 1-ին Արփա գյուղի բժկայանը վերածվում է տրոպկայանի, վորին Կարմիր Խաչի Վարչությունը տալիս է տրոպկայանի նպատակներին համապատասխան պատրաստությամբ բժշկական կազմ: Արփայի տրոպկայանը սպասարկում է Դարալագյազի գավառի և սահմանակից Նախկրայի Շարուրի գավառի գյուղերի մոտ 8000 բնակչությունը:

Ամառվա ընթացքում յեղած շոգերի պատճառով ժողովրդի հեռանալու հետեվանքով տրոպկայանը կենտրոնացնում է իր գործունեյությունը յայլաներում, վորտեղ ոգնություն է հասցնում նաև ուրիշ շրջաններից յեկած



քոչվորներին: 1926 թ. մալարիայի սաստկացման միջոցին տրոպկայանին կից կազմվում է մի շրջիկ բժշկական խումբ:

Հիվանդների շարժումը Արփայի տրոպկայանում 1925–1927 թվերին:

| | ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ՀԱՃԱԽՈՂ | ԿՐԿՆԱԿԻ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| 1925 թ. | 2290 | 3197 | 5487 |
| այդ թվում մալարիկ | 647 | 996 | 1643 |
| 1926 թ. | 3079 | 2815 | 5894 |
| այդ թվում մալարիկ | 712 | 517 | 1229 |
| 1927 թ. | 5029 | 7522 | 12551 |
| այդ թվում մալարիկ | 439 | 1173 | 1612 |

Արփայի լաբորատորիան 1926 թվին կատարել է 998 հետազոտություն, 1927 թվին—3409:

Ինչպես Եջմիածնի և Մեղրու տրոպկայանները, Արփայինը ևս կատարում է նաև սանկրթական աշխատանքներ, վորոնց համար նա ունի մոգական լապտեր և այլ անհրաժեշտ պարագաները:

1926 թվին նա կազմակերպել է 28 դասախոսություն և զրույց, 1825 ունկնդիրներով, 1927 թվին 33 դասախոս. և զրույց, 2580 ունկնդիրներով:

Վերոհիշյալ յերեք տրոպկայաններից և նրանց կից գործող բժշկական խմբերից զատ մալարիայի դեմ պայքարելու համար Հ. Կարմիր Խաչի Վարչությունը հանրապետության զանազան վայրերում կազմակերպել է ընդհանուր տիպի բժկայաններ, վորոնք միաժամանակ ոգնություն են հասցնում թե մալարիայով և թե զանազան ուրիշ հիվանդություններով տառապողներին:

Այդպիսի մի բժկայան բացված է 1925 թ. ամառը Եջմիածնի գավառի Սարդարաբատ կայարանում: Այդ բժկայանը սպասարկում է հարևան գյուղերի մոտ 10000 բնակչությունը, ինչպես և Հայբամբակկոմի և Ջրտնտեսության ծառայողներին և բանվորներին նաև մանկական գաղութի յերեխաներին: Այստեղ ել բացի բժշկական ևհետազոտական աշխատանքներից տարվում են նաև սանկրթական աշխատանքներ:

Հիվանդների շարժումը Սարդարաբատի բժկայանում.

| | ԱՌԱՋԻՆ | ԿՐԿՆԱԿԻ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| 1925 թ. մայիսից մինչև վերջը | 4855 | 8132 | 12987 |
| այդ թվում մալարիկ | 912 | 2869 | 3781 |
| 1926 թ. | 9660 | 17004 | 26664 |
| այդ թվում մալարիկ | 1531 | 5670 | 7201 |
| 1927 թ. | 8289 | 15379 | 23668 |
| այդ թվում մալարիկ | 1255 | 7171 | 8426 |

1927 թ. Սարդարապատի բժկայանը ունեցել է 19 դասախոսություն ու զրույց, 2000 ունկնդիրներով:

1925 թ. ապրիլ ամսին Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը բացում է բժկայան Հայաստանի հեռավոր անկյուններից մեկում, այն է Դիլիջանի Սև-Քար գյուղում: Տեղական հասարակությունը խոշոր մասով անդամագրվելով Հայաստանի Կարմիր Խաչին՝ կարողանում է իր միջոցներով կահավորել բժկայանը՝ հատկացնելով դրա համար հարմարավոր շենք: Այդ հիմնարկությունից օգտվում են ոչ միայն Սև-Քարի և շրջանի ազգաբնակությունը, այլ և Բարանայի ու Ղազախի շրջանի մի մասը: Կայանը օգնություն է հասցնում թե յերթեվեկ հիվանդներին և թե տներում ու մոտակա գյուղերում գտնված հիվանդներին: Բացի այդ խումբը ժամանակ առ ժամանակ շրջում է գյուղերը հիվանդներին տեղն ու տեղը օգնություն հասցնելու համար: Բժկայանը ներկայումս սպասարկում է 9 հայ գյուղ և Ադրբեջանի մի շարք գյուղեր, ընդհանուր առմամբ 18114 բնակիչներով, վորոնցից 10604 Հայաստանում:

Նկատի առնելով, վոր Սև-Քարի շրջանը մալարիայի տեսակետից կարևոր վայր է, Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը 1927 թ. վերանորոգել և լայնացրել է այդ բժկայանի շենքը վորոշած լինելով այնտեղ բանալ տրոպիկական կայան 10 մահճակալով և ծննդաբերական բաժանմունքով:

Հիվանդների շարժումը Սև-Քարի բժկայանում.

| | ԱՌԱՋԻՆ | ԿՐԿՆԱԿԻ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| 1925 թ. ապրիլի 1-ից մինչև վերջը (9 ամիս) | 5161 | 10763 | 15924 |
| այդ թվում մալարիկ | 1436 | 3747 | 5183 |
| 1926 թ. | 7134 | 9867 | 17001 |
| այդ թվում մալարիկ | 1293 | 2486 | 3779 |
| 1927 թ. | 7228 | 5054 | 12282 |
| այդ թվում մալարիկ | 694 | 339 | 1033 |

Գալով սանկրթական աշխատանքներին պետք է ասել, վոր բժկայանը կազմակերպել է. 1925 թ. 21 դասախոսություն և զրույց, 563 ունկնդիրներով.

1926 թ. 31 դասախոսություն և զրույց, 1316 ունկնդիրներով.

1927 թ. 50 » » » 2388 »

Առանձին կերպով պետք է հիշատակել այստեղ Հ. Կարմիր Խաչի ունեցած գործունեությունը Զանգեզուրի գավառում:

Դեռ սկզբի տարիներում Հ. Կարմիր Խաչը առանձին օգնություն է ցույց տվել այդ գավառի բնակչությանը, բանալով այնտեղ մի քանի գյուղերում սննդակայաններ սովից տառապող ժողովրդին սնունդ մատակարարելու համար: Իսկ դրանից հետո 1924 թ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը այդ գավառի Սիսիանի Ղարաքիլիսա գյուղում բացում է մի բժկայան և Ղափանի Տեղ գյուղում մի բուժակակայան, վորը 1925 թ. վերածվում է բժկայանի:





Հ. Կարմիր Խաչի Սև-Քարի բժշկակայանի վերանորոգված շենքը

Այդ չերկու բժկայանները շարունակում են աշխատանքը մինչև այժմ: Ներկա 1928 թ. Գլխավոր Վարչությունը վորոշել է Սիսիանի Ղարաքլիսայի բժկայանը վերածել հիվանդանոցի, վորի համար շրջանի Գործկոմը տրամադրել է համար շենք:

Տեղ գյուղի բժկայանից ոգտվում են ներկայումս 9 գյուղ, մոտ 11000 ազգաբնակությամբ, իսկ Սիսիանի Ղարաքլիսայի բժկայանից ոգտվում են 28 գյուղ:

Տալիս ենք տեղեկություններ այդ չերկու բժշկակայանների հիվանդների չարժման մասին:

1924 թվին Տեղի և Սիսիանի Ղարաքլիսայի բժշկակայանների հիվանդների չարժումը միացրած.

| | ԱՌԱՋԻՆ | ԿՐԿՆԱԿԻ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| | 11150 | 1781 | 12931 |
| այդ թվում մալարիկ | 2711 | 622 | 3333 |

1925 թվին Տեղի բժշկակայանի հիվանդների չարժումը.

| | ԱՌԱՋԻՆ | ԿՐԿՆԱԿԻ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| | 4216 | 1380 | 5591 |
| այդ թվում մալարիկ | 1680 | 700 | 2380 |
| 1926 թ. | 5101 | 4474 | 9575 |
| այդ թվում մալարիկ | 1140 | 2156 | 3296 |
| 1927 թ. | 4813 | 3074 | 7887 |
| այդ թվում մալարիկ | 911 | 1015 | 1926 |

Սիսիանի Ղարաքիլիսայի բժկայանի հիվանդների չարժումը

| | ԱՌԱՋԻՆ | ԿՐԿՆԱԿԻ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| 1925 թ. | 8595 | 1398 | 9993 |
| այդ թվում մալարիկ | 1870 | 281 | 2151 |
| 1926 թ. | 10071 | 1813 | 11884 |
| այդ թվում մալարիկ | 1616 | 203 | 1819 |
| 1927 թ. | 7830 | 2440 | 10270 |
| այդ թվում մալարիկ | 953 | 329 | 1282 |

Այդ բոլոր տարիների ընթացքում բժշկակայանների ջանքերով շրջանում տրվել են մի չարք դասախոսություններ և զրույցներ առողջապահական և սանիտարական խնդիրների մասին:

Ահա այն աշխատանքները, վոր կատարել է Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը մալարիայի և ընդհանրապես տրոպիկական հիվանդությունների դեմ պայքարելու համար:

Տրոպկայանների և մալարիայի դեմ պայքարող մյուս բժկայանների մասին մեր խոսքը վերջացնելուց առաջ պետք է նկատել, վոր բացի Եջմիածնի տրոպկայանից բոլոր մյուս տրոպկայանները, ինչպես և ընդհանրապես Հ. Կարմիր Խաչի բոլոր բժշկակայանները, լինելով միակ բուժական հիմնարկու–

թյունները իրենց շրջանում, բժշկական օգնություն եյին ցույց տալիս բացի մալարիկ հիվանդներից, նաև ուրիշ հիվանդություններով տառապողներին, ինչպես և կատարում եյին ծաղկի պատվաստում:

## Բ. Տրախոմա

Այժմ անցնենք Հայաստանի Կարմիր Խաչի գործունեության աչքի հիվանդությունների և մանավորապես տրախոմայի դեմ պայքարի բնագավառում:

Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը աչքի առաջ ունենալով, որ Հայաստանի վորոշ վայրերում խիստ տարածված է աչքացավը, մանավանդ տրախոման, վորը ունի վարակիչ բնույթ, իր նպատակներից մեկն է գարձնում նաև պայքարել այդ հասարակական չարիքի դեմ:

Նկատի առնելով, վոր այդ հիվանդությամբ առանձնապես վարակված շրջաններից են Նոր Բայազետի գավառի վորոշ մասերը, Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը 1925 թ. կազմակերպում է մի շրջիկ բժշկական խումբ մասնագետ բժշկի ղեկավարությամբ և մատակարարելով նրան անհրաժեշտ գործիքներ, դեղորայք և այլ պարագաներ, ուղարկում է Նոր Բայազետի գավառը: Նոր Բայազետում այդ միջոցին կազմված Կարմիր Խաչի մասնաճյուղը տեղական մարմինների հետ աջակցություն են ցույց տալիս այդ խմբին, վորը սկսում է իր գործունեությունը 1925 թ. հունիսի 15-ից նախ Նոր-Բայազետ քաղաքում: Խումբը շատ օգտակար գործունեություն է ցույց տալիս. անհագին թվով գյուղացիք ամբողջ շրջակայքից թողնելով գործը գալիս են բժշկության համար: Հունիսի 15-ից մինչև 30-ը Նոր Բայազետում խումբը օգնություն է ցույց տվել 559 հոգու (1059 հաճախում), վորոշ թվով հիվանդներ տեղավորել է Նոր Բայազետի հիվանդանոցը, վորտեղ կատարել է վիրահատումներ կատարակտի և այլ տեսակ հիվանդությունների:

Հուլիսի սկզբում խումբը տեղափոխվել է Դալի Ղարտաշ գյուղը, ապա Բասար-Գեչարի և Ցելենովկայի շրջանները, ուր նա օգնություն է հասցրել հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներում 2084 հիվանդի (8321 հաճախում): Դրանցից 628 հիվանդ տրախոմայով, վորոնք ունեցել են 3856 հաճախում: Այս յերեք և կես ամսվա ընթացքում խումբը կատարել է 162 վիրահատում, վորից 34 կատարակտի:

Հուլիս և օգոստոս ամիսներում խումբը կատարել է Նոր Բայազետի գավառի Գյուղաջիկ և Դալիզարդաղ և ապա Գրխբուլաղ ու Դաշքենդ գյուղերի բնակչության հետազոտությունը ըստ հասակային խմբավորումների և ստացել է հետևյալ տվյալները.

Գյուղաջիկ և Դալիզարդաշ գյուղերի բնակչության հետազոտությունը ըստ հասակային խմբավորումների, կատարված հուլիսին 1925 թ.





Հ. Կարմիր խաչի Սև-Քարի հիվանդանոցը: Հիվանդների պալատ

| ՏԱՐԻՔ | ՀԵՏԱԶՈՏՎԱԾՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ | ՏՐԱԽՈՄԱՅՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ | ՏՈԿՈՍՆԵՐՈՎ |
|---|---|---|---|
| 0—1 | 45 | 3 | 6,6 |
| 1—10 | 314 | 42 | 13.3 |
| 10—20 | 265 | 62 | 23,4 |
| 20—30 | 1651 | 24 | 14,5 |
| 30—40 | 169 | 41 | 24,2 |
| 40—50 | 94 | 27 | 28,7 |
| 50—60 | 75 | 18 | 24 |
| 60—70 | 34 | 13 | 38,3 |
| 70—80 | 14 | 5 | 36 |

*Նոր Բայազետի գավառի Գրխբուլախ և Դաշքենդ գյուղերի բնակչության հետազոտությունը ըստ հասակային խմբավորումների, կատարված օգոստոսին* 1925 *թ.*

| ՏԱՐԻՔԸ | ՀԵՏԱԶՈՏՎԱԾՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ | ՏՐԱԽՈՄԱՅՈՎ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ | ՏՈԿՈՍՆԵՐՈՎ |
|---|---|---|---|
| 0—1 | 26 | 4 | 15,4 |
| 1—10 | 124 | 42 | 33,8 |
| 10—20 | 182 | 52 | 28,5 |
| 20—30 | 108 | 30 | 27,7 |
| 30—40 | 118 | 36 | 30,5 |
| 40—50 | 70 | 22 | 31,4 |
| 50—60 | 42 | 6 | 14,4 |
| 60—70 | 12 | 2 | 16,6 |

*Բացի բուժական և հետազոտական աշխատանքներից ակնաբույժ խումբը ունեցել է և մի շարք դասախոսություններ ու զրույցներ աչքի հիվանդությունների, նրանց տարածման և աչքի առողջապահության մասին:*

*Նոր Բայազետի գավառի ակնաբույժ խմբի հիվանդների շարժումը.*

| | ԱՌԱՋԻՆ | ԿՐԿՆԱԿԻ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| 1926 *թ. հունիսից մինչև սեպտեմբերի վերջը* | 2142 | 4963 | 7105 |
| *այդ թվում տրախոմայով հիվանդներ* | 716 | 2716 | 3432 |
| 1927 *թ. հուլիս ամսին* | 805 | 3195 | 4000 |
| *այդ թվում տրախոմայով* | 334 | 1934 | 2268 |

*Նոր Բայազետի գավառի մասին խոսելով, պետք է ավելացնել, վոր Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը՝ ընդառաջ գնալով տեղական ազգաբնակչության և Գավգործկոմի կողմից հայտնած ցանկությանը՝ վորոշել է*

ընթացքում 1928 թվին բանալ մի հիվանդանոց Ցելենովկա (Սևան) ավանում, նորոգելով և հարմարեցնելով այդ նպատակի համար տեղական ամբուլատորիայի և շրջգործկոմի շենքը, վորը ազգաբնակությունը դրել է Կարմիր Խաչի տրամադրության տակ: Այդ հիվանդանոցը պիտի ծառայի նաև իբրև բազա ակնաբուժական աշխատանքների համար գավառում:

1926 թ. հուլիսին Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը կազմակերպում է յերկրորդ բժշկական խումբը տրախոմայի դեմ պայքարելու նպատակով:

Խումբը սկսում է իր գործունեությունը 1926 թ. հուլիսի 2-ից Ղամարլուի շրջանում և շարունակում է մինչև օգոստոսի 10-ը: Ապա խումբը անցնում է Դավալուի շրջանը: Խմբի գործունեությունը դադարում է սեպտեմբերի 1-ին: Հուլիսի 2-ից մինչև օգոստոս 10 ընդունվել է 1732 հիվանդ, վորոնք հաճախել են ամբուլատորիա 4894 անգամ: Խումբը կատարել է 71 վիրահատում տեղական հիվանդանոցներում: Բացի դրանից ձեռնարկված են դասախոսություններ տրախոմա հիվանդության մասին Ցուվա, Արտաշատ և Ներքին Նովրուզլու գյուղերում և հետազոտության է յենթարկված այդ գյուղերի բնակչությունը:

Հիմնվելով ունեցած տվյալների վրա կարելի յե ասել, վոր աչքի հիվանդությունները մասնավորապես տրախոման խիստ տարածված է այդ շրջանում ու տրախոմայով հիվանդները կազմում են առաջին այցելողների ընդհանուր թվի 35%-ը:

1927 թ. ամառը հունիսի 25-ից մինչև օգոստոսի 25 Հ. Կ. Խաչի Գլխ. Վարչության կազմակերպած մի ակնաբուժական խումբ գործում է Լենինականի գավառում: Խումբը հետազոտության է յենթարկել Բայանդուր, Դահարլու, Ալեքսանդրովկա, Մոլլա-Մուսա, Փոքր Ղարաքիլիս, և Թյուրք Ղարաքիլիսա գյուղերի բոլոր տները, ընդհանուր առմամբ 779 տուն, 2587 բնակիչներով: Այդ թվից 1101 հոգի յեղել են հիվանդ աչքերից, այսինքն 43%, վորոնցից 610 հոգի, այսինքն 23% հիվանդ տրախոմայով:

### գ. Սիֆիլիս

1924 թ. և 1925 թ. Առժողկոմատի կատարած հետազոտություններից պարզվել էր, վոր Լենինականի և Լոռի-Փամբակի գավառների վորոշ շրջաններում տարածված էր սիֆիլիս հիվանդությունը: Այս հիվանդության դեմ մաքառելու համար Հ. Կարմիր Խաչի Գլխ. Վարչությունը Լոռի-Փամբակի Մեծ—Պարնի գյուղում 1926 թ. հուլիսի 11-ին բաց է արել գյուղական վեներոլոգիական դիսպանսեր:

Մեծ-Պարնիի շրջանի մեջ մտնում են 9 գյուղ, 12225 հոգի բնակչությամբ: Դիսպանսերը բժշկական օգնություն է ցույց տվել թե այդ գյուղերի բնակչությանը և թե հարևան գյուղերին: Բժշկակայանը ընդունել է բացի վեներական հիվանդներից նաև այլ հիվանդություններով տառապող անձանց:



Ցավ պետք է ասել, վոր ինչպես ցույց են տալիս վիճակագրական տեղեկությունները, վեներական և կաշվի հիվանդությունները կազմում են այդ դիսպանսերի հիվանդների հազիվ 25%, իսկ սիֆիլիսը մասնավորապես հազիվ 10% միայն, իսկ մնացածը կազմում են զանազան ուրիշ հիվանդությունները, ստամոքսի, աղիքների, աչքերի և այլն:

Այսպես, 1926 թվին օգոստոսի 1-ից մինչև տարվա վերջը հիվանդների շարժումը.

| ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ | ԱՌԱՋԻՆ | ԿՐԿՆԱԿԻ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| | 3743 | 6827 | 10580 |
| այդ թվում վեներական և կաշվի հիվանդություններ | 743 | 1786 | 2529 |
| իսկ միայն ՍԻՖԻԼԻՍԸ | 73 | 741 | 814 |

| 1927 Թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԻՎԸ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ | ԱՌԱՋԻՆ | ԿՐԿՆԱԿԻ | ԸՆԴԱՄԵՆԸ |
|---|---|---|---|
| | 10911 | 17378 | 28289 |
| այդ թվում ՍԻՖԻԼԻՍԸ | 314 | 2624 | 2928 |

Բացի բուժական աշխատանքներից դիսպանսերը տարել է և սանկրթական աշխատանքներ: 1926 թվին նա կազմակերպել է 18 դասախոսություն և զրույց, ունենալով 600 ունկնդիր, 1927 թվին 38 դասախոսություն 4470 ունկնդիրներով: Դասախոսությունների ժամանակ մոգական լապտերի միջոցով ցույց են տրվել նյութին համապատասխան նկարներ:

Լենինականի յերկրաշարժի ժամանակ (22 հոկտ. 1926 թ.) Մեծ Պարնիի դիսպանսերի շենքը սաստիկ վնասվել է: Աչքի առաջ ունենալով այդ հանգամանքը և գտնելով, վոր նույն գավառի Նալբանդ գյուղը ավելի մեծ հարմարություններ է ներկայացնում դիսպանսերի համար, Հ. Կ. Խաչի Գլխավոր Վարչությունը վորոշել է սույն 1928 թ. Մ. Պարնիի դիսպանսերը տեղափոխել Նալբանդ գյուղը և այդ մասին պետք յեղած միջնորդություններով դիմել է ուր հարկն է:

Վեներոլոգիական մի ուրիշ դիսպանսեր ել Հ. Կարմիր Խաչը վորոշել է բանալ Լենինականի գավառի Աղբաբայի շրջանում: Մինչ այդ սույն 1927 թ. հունվարի 17-ից այնտեղ գործում էր Հ. Կարմիր Խաչի շրջիկ բժշկական խումբը մասնագետ բժշկի գլխավորությամբ:

Այդ խումբը գործել է հունվարի 17-ից մինչև 9 մարտի: Այդ միջոցին հիվանդների շարժումը հետևյալն էր.—

| | ԱՌԱՋԻՆ | | ԿՐԿՆԱԿԻ | | ԸՆԴԱՄԵՆԸ | |
|---|---|---|---|---|---|---|
| | 345 | | 8864 | | 9209 | |
| | ԱՐԱԿ. | ԻԳԱԿ. | ԱՐԱԿ. | ԻԳԱԳ. | ԱՐԱԿ | ԻԳԱԿ. |
| այդ թվից | 188 | 157 | 4955 | 3909 | 5143 | 4066 |

Նեոսալվարսան ներարկել են 1291 անգամ:

Նույն թվականի նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին վենարշավախմբի ընդունած հիվանդների շարժումը հետևյալն եր.—

| | ԱՌԱՋԻՆ | | ԿՐԿՆԱԿԻ | | ԸՆԴԱՄԵՆԸ | |
|---|---|---|---|---|---|---|
| | 189 | | 4679 | | 4868 | |
| այդ թվից | ԱՐԱԿ. | ԻԳԱԿ. | ԱՐԱԿ. | ԻԳԱԿ. | ԱՐԱԿ. | ԻԳԱԿ. |
| | 116 | 73 | 2373 | 2306 | 2489 | 2379 |

Նեոսալվարսան սրսկել են 916 անգամ:

* *
*

Կարմիր Խաչի բժշկական գործունեության պատկերը ամփոփելու համար պետք է հիշատակել և այն, վոր Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը, ցանկանալով իր հիմնարկություններում գործը հանձնել ավելի պատրաստված և վստահելի անձանց, դեռ 1923 թ. հունվարին կազմակերպում է Յերևանում գթության քույրերի յերկամյա դասընթացներ: Հաստատելով այդ դասընթացների համար հատուկ բժշկական հանձնաժողովի կողմից մշակված առարկաների և դասավանդման ծրագիրը, Գլխավոր Վարչությունը բաց է անում այդ դասընթացները, վորոնց ընդունվում են 23 հոգի ունկնդիրներ, մեծ մասամբ միջնակարգ կրթության անձինք: Առարկաների դասավանդման համար հրավիրվում են մասնագետ բժիշկներ: Գործնական աշխատանքների համար դասընթացների տրամադրության տակ են դրվում Յերևանի հիվանդանոցները և մանկավարժական թանգարանը:

1925 թ. սկզբներին Հ. Կարմիր Խաչն ունեցել է շրջանավարտների առաջին խումբը, վորոնց և տեղավորել է թե իր և թե պետական հիմնարկներում: Սակայն նկատի ունենալով, վոր նույնանման դասընթացներ Լենինականում միաժամանակ բաց է արել և Ամերիկական Նպաստամատույց Կոմիտեն, Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը 1925 թ. ժամանակավորապես փակում է իր դասընթացները:

Պետք է հիշատակել նաև մի ուրիշ հանգամանք, այն է վոր Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը նպատակ ունենալով Կարմիր Խաչի հիմնարկություններում պաշտոնավարող բժիշկներին հնարավորության տալ կատարելագործվելու համար, վորոշ հերթով աշխատում եր ուղարկել բժիշկներին այդ նպատակով այլ և այլ համալսարաններ պայմանով, վոր վերադարձին նրանք շարունակեն պաշտոնավարել Կարմիր Խաչի հիմնարկությունների մեջ:

## Դ. ՈԳՆՈՒԹՅՈՒՆ ԱՆԱՊԱՍՏԱՆ ՅԵՐԵԽԱՆԵՐԻՆ

Իմպերիալիստական և քաղաքացիական յերկարատև պատերազմների հետևանքով Հայաստանում մնացել եյին տասնյակ հազարավոր յերեխաներ զրկված իրենց ծնողներից և խնամքից: Դրանց մեծ մասը վերցրել եր իր խնամքի տակ Հայաստանի կառավարությունը և Ամերիկական կոմիտեն, իսկ վերջին շրջանում վորոշ մասը Հայաստանի Անապաստան Յերեխաների Բարեկամ-



| №№ | | 1 | | | 2 | | | 3 | | | Տ ե | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Էջմիածնի տրոպկայան | | | Մեղրու տրոպկայան | | | Արփայի տրոպկայան | | | բժշկա | |
| Տ ա ր ե թ ի վ ը | Հաճախումներ | Հիվանդ. տեսակը | | | Հ | | | Ի | | | | |
| | | Մասնավոր | Զանազան | Ընդամենը | Մասնավոր | Զանազան | Ընդամենը | Մասնավոր | Զանազան | Ընդամենը | Մասնավոր | |
| 1924 թ. | Առաջին | 7931 | 5921 | 13852 | 1193 | 1642 | 2835 | 187 | 389 | 576 | 1143 | 38 |
| | Կրկնակի | 23578 | 2905 | 26483 | 1168 | 3236 | 4404 | 202 | 357 | 559 | 239 | 5 |
| | Ընդամենը | 31509 | 8826 | 40335 | 2361 | 4878 | 7239 | 389 | 746 | 1135 | 1382 | 4 |
| 1925 թ. | Առաջին | 7408 | 3458 | 10866 | 1958 | 4337 | 6295 | 647 | 1643 | 2290 | 1680 | 25 |
| | Կրկնակի | 33211 | 4766 | 37977 | 6750 | 4427 | 11177 | 996 | 2201 | 3197 | 700 | 6 |
| | Ընդամենը | 40619 | 8224 | 48843 | 8708 | 8764 | 17472 | 1643 | 3844 | 5487 | 2380 | 32 |
| 1926 թ. | Առաջին | 8614 | 1381 | 9995 | 1105 | 5548 | 6643 | 712 | 2367 | 3079 | 1140 | 39 |
| | Կրկնակի | 39555 | 2077 | 41632 | 6959 | 2887 | 9846 | 517 | 2298 | 2815 | 2156 | 23 |
| | Ընդամենը | 48169 | 3458 | 51627 | 8064 | 8435 | 16499 | 1229 | 4665 | 5894 | 3296 | 62 |
| 1927 թ. | Առաջին | 2564 | 1407 | 3971 | 648 | 1112 | 1760 | 439 | 4590 | 5029 | 1011 | 39 |
| | Կրկնակի | 20602 | 1341 | 21943 | 3698 | 1642 | 5340 | 1173 | 6349 | 7522 | 1015 | 20 |
| | Ընդամենը | 23166 | 2748 | 25914 | 4346 | 2754 | 7100 | 1612 | 10939 | 12551 | 2026 | 59 |

Լենինականի յերկրաշա

Ա. Բաց թողնվա

| 1 | ՎՈՐՏԵՂ | ՃԱՇ |
|---|---|---|
| 2 | Քաղաքում . . | 295313 |
| 3 | Գյուղերում . | 148451 |
| 4 | Ընդամենը . . | 443764 |

# ՏԵՂԵԿԱԳԻՐ Հ. ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ

## ԲՈՒԺՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՎԱՆԴՆԵՐԻ ՇԱՐԺՄԱՆ 1924—1927

| | 2 | | 3 | | | 4 | | | 5 | | | 6 | | | 7 | | | 8 | | | 9 | | | 10 | | | 11 | | | 12 | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Մեղրու տրոպկայան | | Արփայի տրոպկայան | | | Տեղի բժշկական | | | Սիսիանի բժշկական | | | Սարդարաբաթի բժշկական | | | Սև-Քարի բժշկական | | | Ալագղայանի բժշկական | | | Ակնաբուժական խումբ № 1 | | | Ակնաբուժական խումբ № 2 | | | Խաթունարխի բժշկական | | | Գառնիի Վենդիսպանսեր | | | |
| ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | | |
| | Զանազան | Ընդամենը | Մալարիա | Զանազան | Ընդամենը | Մալարիա | Զանազան | Ընդամենը | Մալարիա | Զանազան | Ընդամենը | Մալարիա | Զանազան | Ընդամենը | Մալարիա | Զանազան | Ընդամենը | Մալարիա | Զանազան | Ընդամենը | Տրախոմա | Զանազան | Ընդամենը | Տրախոմա | Զանազան | Ընդամենը | Մալարիա | Զանազան | Ընդամենը | Մալարիա | Զանազան | Սիֆիլիս | Ընդամենը |
| 03 | 1642 | 2835 | 187 | 389 | 576 | 1143 | 3827 | 4970 | 1568 | 4612 | 6180 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 68 | 3236 | 4404 | 202 | 357 | 559 | 239 | 535 | 774 | 383 | 624 | 1007 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 61 | 4878 | 7239 | 389 | 746 | 1135 | 1382 | 4362 | 5744 | 1951 | 5236 | 7187 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 8 | 4337 | 6295 | 647 | 1643 | 2290 | 1680 | 2536 | 4216 | 1870 | 6725 | 8595 | 912 | 3943 | 4855 | 1436 | 3725 | 5161 | 144 | 693 | 837 | 6284 | 1456 | 2084 | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 0 | 4427 | 11177 | 996 | 2201 | 3197 | 700 | 680 | 1380 | 281 | 1117 | 1398 | 2869 | 5263 | 8132 | 3747 | 7016 | 10763 | 278 | 1284 | 1562 | 3228 | 3009 | 6237 | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 8 | 8764 | 17472 | 1643 | 3844 | 5487 | 2380 | 3216 | 5596 | 2151 | 7342 | 9993 | 3881 | 9206 | 12987 | 5183 | 10741 | 15924 | 422 | 1977 | 2399 | 3856 | 4465 | 8321 | — | — | — | — | — | — | — | — | — | — |
| 5 | 5548 | 6643 | 712 | 2367 | 3079 | 1140 | 3961 | 5101 | 1616 | 8155 | 10071 | 1531 | 8129 | 9660 | 1296 | 5841 | 7137 | 489 | 2128 | 2617 | 716 | 1426 | 2142 | 607 | 1126 | 1733 | 2180 | 1247 | 3427 | 132 | 3538 | 73 | 3743 |
| 9 | 2887 | 9846 | 517 | 2298 | 2815 | 2156 | 2318 | 4474 | 203 | 1610 | 1813 | 5670 | 11334 | 17004 | 2486 | 7382 | 9867 | 733 | 2733 | 3466 | 2716 | 2247 | 4963 | 1922 | 1233 | 3155 | 9908 | 2347 | 12255 | 330 | 5756 | 741 | 6827 |
| 1 | 8435 | 16499 | 1229 | 4665 | 5894 | 3296 | 6279 | 9575 | 1819 | 10065 | 11884 | 7201 | 19463 | 26664 | 3782 | 13222 | 17004 | 1222 | 4861 | 6083 | 3432 | 3673 | 7105 | 2529 | 2359 | 4888 | 12088 | 3594 | 15682 | 462 | 9294 | 814 | 10570 |
| 3 | 1112 | 1760 | 439 | 4590 | 5029 | 1011 | 3902 | 4913 | 953 | 6877 | 7830 | 1255 | 7034 | 8289 | 694 | 6534 | 7228 | 1320 | 3181 | 4501 | 334 | 471 | 805 | 610 | 491 | 1101 | 3877 | 4189 | 8066 | 275 | 10322 | 314 | 10911 |
| 3 | 1642 | 5340 | 1173 | 6349 | 7522 | 1015 | 2063 | 3078 | 329 | 2111 | 2440 | 7171 | 8208 | 15379 | 339 | 4715 | 5051 | 1101 | 5760 | 6861 | 1934 | 1261 | 3195 | — | — | — | 16795 | 6656 | 23451 | 583 | 14171 | 2624 | 17378 |
| 6 | 2754 | 7100 | 1612 | 10939 | 12551 | 2026 | 5965 | 7991 | 1282 | 8988 | 10270 | 8426 | 15242 | 23668 | 1033 | 11249 | 12282 | 2421 | 8941 | 11362 | 2268 | 1732 | 4000 | 610 | 491 | 1101 | 20672 | 10849 | 31517 | 858 | 24493 | 2938 | 28289 |

Լենինականի յերկրաշարժի աղետյալներին Հ. Կարմիր Խաչի Գլխ. վարչության ցույց տված սննդային օգնությունը։

*Ա. Բաց թողնված սնունդը.*

| | ՎՈՐՏԵՂ | ՀԱՑ | ԿԱԹ | ԹԵՅ |
|---|---|---|---|---|
| 1 | | | | |
| 2 | Քաղաքում . . | 295313 | 66922 | 85255 |
| 3 | Գյուղերում . | 148451 | — | — |
| 4 | Ընդամենը . . | 443764 | 66922 | 85255 |

*Բ. 1927 թ. մայիսի 1-ից մինչև հոկտեմբ. 1-ը կոնսուլտացիայում բաց է թողնված.*

| | ԿԱԹ | Մաննայա կաշա | Զանազան խառնուրդ |
|---|---|---|---|
| Լիտր | 6924 | 1006 | 1647 |
| — | — | — | — |
| » | 6924 | 1006 | 1647 |

ԾԱՆ…
րերյալ ավ…
և թե նրա…
իսկ սկսած…
նարխում, …
նի ընդհան…
րաբերյալ …
ընդունած հ…

Թ. Թ.

| …յան | 2 Մեղրու տրոպկայան | | | 3 Արփայի տրոպկայան | | | Տ… բժշկա… | | 13 Լենինականի վեներաշամբուլատորիա | | | 14 Ջեյվայի բուժակայան | | | 15 Թյուրքմենլուի բուժակայան | | | 16 Նոր Ցեխդոկիայի բուժակայան | | | 17 | 18 ԸՆԴԱՄԵՆԸ | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| …ամկը | Հ Ի | | | | | | | | Տ Ե Ս Ա Կ Ն Ե Ր Ը | | | | | | | | | | | | | | | | | | |
| Ընդամենը | Մալարիա | Ջանազան | Ընդամենը | Մալարիա | Ջանազան | Ընդամենը | Մալարիա | Ջանազան | Ջանազան | Սիֆիլիս | Ընդամենը | Մալարիա | Ջանազան | Ընդամենը | Մալարիա | Ջանազան | Ընդամենը | Մալարիա | Ջանազան | Ընդամենը | Լենինականի գավառային հիվանդ. և ամբուլատորիայի թ. | Մալարիա | Ջանազան | Սիֆիլիս | Տրախոմա | Աչքի ջանազան | Ընդամենը |
| 13852 | 1193 | 1642 | 2835 | 187 | 389 | 576 | 1143 | 38 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | | 12022 | 16391 | — | — | — | 28413 |
| 26483 | 1168 | 3236 | 4404 | 202 | 357 | 559 | 239 | 5 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | | 25570 | 7657 | — | — | — | 33227 |
| 40335 | 2361 | 4878 | 7239 | 389 | 746 | 1135 | 1382 | 4[illegible] | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | | 37592 | 24048 | — | — | — | 61640 |
| 10866 | 1958 | 4337 | 6295 | 647 | 1643 | 2290 | 1680 | 2[illegible] | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | | 16055 | 27060 | — | 628 | 1451 | 45199 |
| 37977 | 6750 | 4427 | 11177 | 996 | 2201 | 3197 | 700 | 6 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | | 48832 | 26754 | — | 3228 | 3009 | 81823 |
| 48843 | 8708 | 8764 | 17472 | 1643 | 3844 | 5487 | 2380 | 32 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | | 64887 | 53814 | — | 3856 | 4465 | 127022 |
| 9995 | 1105 | 5548 | 6643 | 712 | 2367 | 3079 | 1140 | 39 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | | 18815 | 42605 | 73 | 1323 | 2552 | 65468 |
| 41632 | 6959 | 2887 | 9846 | 517 | 2298 | 2815 | 2156 | 23 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | | 68517 | 40731 | 741 | 4638 | 3180 | 118107 |
| 51627 | 8064 | 8435 | 16499 | 1229 | 4665 | 5894 | 3296 | 62 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 3873 | 87332 | 87209 | 814 | 5961 | 6032 | 187348 |
| 3971 | 648 | 1112 | 1760 | 439 | 4590 | 5029 | 1011 | 39 | 285 | 534 | 819 | 850 | 2365 | 3215 | 799 | 2250 | 3049 | 1006 | 1057 | 2063 | — | 15691 | 55105 | 848 | 944 | 962 | 73550 |
| 21943 | 3698 | 1642 | 5340 | 1173 | 6349 | 7522 | 1015 | 20 | 417 | 13543 | 13951 | 5726 | 1534 | 7260 | 4545 | 1499 | 6044 | 4149 | 912 | 5061 | — | 67226 | 57378 | 16167 | 1934 | 1261 | 143966 |
| 25914 | 4346 | 2754 | 7100 | 1612 | 10939 | 12551 | 2026 | 59 | 702 | 14077 | 14779 | 6576 | 3899 | 10475 | 5344 | 3749 | 9093 | 5155 | 1969 | 7124 | — | 82917 | 112483 | 17015 | 2878 | 2223 | 217516 |

Լենինականի յերկրաշա

Ա. Բաց Թողնվա

| 1 | ՎՈՐՏԵՂ | ՃԱՇ |
|---|---|---|
| 2 | Քաղաքում . . | 295313 |
| 3 | Գյուղերում . | 148451 |
| 4 | Ընդամենը . . | 443764 |

ԹՈՒԹՅՈՒՆ—Սույն աղյուսակի մեջ Էջմիածնի տրոպկայանի հիվանդների շարժման վերա-յալների մեջ 1924, 1925 և 1926 թ.թ. ընթացքում մտնում են թե Էջմիածնի տրոպկայանի և կից գործող մալարիական ժամանակավոր շրջիկ խմբերի ընդունած հիվանդների թվերը, 1927 թվից, յերբ փոխարեն այդ շրջիկ խմբերի բացվել են առանձին բժշկական խաթու-բուժակայանները Թյուրքմենլիում, Ջեյվայում և Նոր Ցեխդոկիայում, Էջմիածնի տրոպկայանի ղեկավարության և վերահսկողության տակ, այդ կայանների հիվանդների շարժման վե-կերը տրվում են առանձին կերպով: Դրանով է բացատրվում Էջմիածնի տրոպկայանում հիվանդների թվի առերևույթ նվազումը:

րի տակ Հայաստանի կառավարությունը և Ամերիկյան կոմիտեն, իսկ վերջին շրջանում վորոշ մասը Հայաստանի Անապաստան Երեխաների Բարեկամ–





Հ. Կ. Խաչի մանկատան ակումբ–ընթերցարանը

ների Ընկերությունը։ Սակայն չնայած դրան դեռ էլի մնում էին Երևանում և ուրիշ քաղաքներում բավական մեծ թվով անապաստան երեխաներ, վորոնք թափառում էին փողոցներում և իրենց անվայել վարքի պատճառով «խուժան» մականվան էին արժանացել, ներկայացնելով այսպիսով մի խոշոր հասարակական չարիք։

Ցանկանալով ոգնության գալ անապաստան երեխաներին, Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը նախ մի քանի ամսվա ընթացքում դրամական նպաստ է հատկացնում «Հայաստանի Անապաստան Երեխաների Բարեկամների Ընկերությանը» 100 երեխաների պահպանման համար և հետո 1925 թ. մայիս ամսին ինքը կազմակերպում է մի մանկատուն, գնելով դրա համար մի հատուկ շենք և նորոգելով ու հարմարեցնելով դրան կից մի լայն հրապարակ և մարզագետին բանջարանոցի և այլ գործունքների համար։ Այդ մանկատան մեջ Կարմիր Խաչը իր անմիջական խնամքի տակ է առնում 100 անապաստան երեխաներ 8–14 տարեկան, հոգալով թե նրանց ֆիզիկական առողջության խնդիրը և թե դաստիարակության գործը։

Ազատվելով փողոցի վատ մթնոլորտից և ապրելով նոր պայմաններում, այդ անապաստան երեխաները կարճ ժամանակում կերպարանափոխվում են թե ֆիզիկապես և թե բարոյապես։ Նրանք այժմ մաքուր են և առողջ։ Նրանք յոլորն էլ անդամագրված են թե դպրոցներում և թե մանկապարտեզներում։ Շատերը նրանցից ցույց են տալիս աչքի ընկնող ընդունակություններ, որինակ նկարչական, երաժշտական և այլն։ Եվ Կարմիր Խաչի Վարչությունը պետք յեղած ուշադրությունը նվիրում է այդ ընդունակությունները նրանց մեջ կանոնավոր զարգացնելուն։

Առանձին ուշադրություն է դարձվում սաների աշխատանքային դաստիարակության վրա, ինչպես և կարգապահության գիտակցությունը նրանց մեջ ամրապնդելու վրա։ Բացի դրանից սաների մեջ ինքնագործունեությունը զարգացնելու նպատակով նրանց համար բացված է ակումբ, վորտեղ կենտրոնացած են նրանց բոլոր զբաղմունքները, դասերը, խաղերը, հավաքույթները, զրույցները, պիոներական պարապմունքները և այլն։

Մանկատան սաների մեծ մասը մտնում են պիոներական կազմակերպությունների մեջ։ Համարյա բացման որից մանկատանը գոյություն ունի պատանի պիոներների կոլլեկտիվ։ Պիոներների ձեռքին է կենտրոնացած ակումբային աշխատանքների մեծ մասը։ Նրանք հարաբերություններ են պահում նաև դրսի աշխարհի հետ, լույս են ընծայում պատի լրագիր, տալիս են յերեկույթներ, կազմակերպում են ամառային եքսկուրսիաներ և այլն։ Այս առթիվ պետք է ավելացնել, վոր Հ. Կ. Խաչի Գլխավոր Վարչությունը առհասարակ իր որտին մոտ ընդունելով պիոներական կազմակերպությունների զարգացումը և ֆիզիքական բարգավաճումը, 1927 թ. ամառվա ընթացքում իր վրա էր վերցրել պիոներական ամառային բանակի բժշկական մասի կազմակերպությունը։ Բանակը տեղավորված էր Ծաղկաձորում և բաղկացած





Հ. Կ. ԽԱՉԻ Մանկատան սաները մարզանքի ժամանակ

եր 800 յերկսեռ յերեխաներից։ Կարմիր Խաչն այդ գործը վարելու համար նշանակել եր իր կողմից յերկու բժիշկ, վորոնք կանոնավոր կերպով հսկում եյին յերեխաների առողջապահական պայմաններին, և տալիս եր բանակի համար պահանջված դեղորայքը։

Մանկատան բացման ժամանակ նրա սաների թիվը հասնում եր 100 հոգու, բոլորը տղաներ սկսած 8-ից մինչև 14 տարեկան։ Դրանցից մի մասը տարվա ընթացքում փախել են կամ գնացել են ծնողների մոտ, և նրանց փոխարեն ընդունվել են նորերը։

1926 թ. ըստ ցուցակի սաների թիվը հասնում եր 76։ Դրանցից դպրոցականներ եյին 16 հոգի, իսկ մնացածը անգրագետ կամ կիսագրագետ։

Աչքի առաջ ունենալով այս հանգամանքը հրավիրվում են յերկու ուսուցիչ, վորոնք պատրաստում են սաներին դպրոցների համար։

Առ 1 հունվարի 1927 թ. մանկատան սաների թիվն եր 69։ Սաների դպրոցական տախտակը հետևյալն եր՝

| | |
|---|---|
| 1. Ա. աստիճանի դպրոցներում | 34 |
| 2. 7 ամյակներում | 10 |
| 3. Մեծահասակների դպրոցում | 16 |
| 4. 2-րդ աստիճանի դպրոցում | 1 |
| 5. Բաղլուսվարում | 2 |
| 6. Մանկապարտեզում | 2 |
| 7. Վոչ դպրոցական | 4 |
| Ընդամենը | 69 |

1927 թ. փետրվարի սկզբին ընդունվում են մանկատան մեջ Լենինականից յերկրաշարժի հետևանքով ուղարկված 25 սան 9-ից մինչև 15 տարեկան։

Առ 1 նոյեմբերի մանկատան սաների թիվն եր 63 հոգի 5-ից մինչև 18 տարեկան, վորոնցից 60 հոգի դպրոցական։ Սաների թվի պակասելը բացատրվում է նրանով, վոր մեծահասակների վորոշ մասը վարչությունը աշխատանքի յե տեղավորել զանազան արհեստանոցներում և գործարաններում, օրինակ՝ Լենինականի տեքստիլ գործարանում և այլն։

## ՅԵ. Հ. ԿԱՐՄԻՐ ԽԱՉԸ ՅԵՎ ԱՌԱՋԻՆ ՈԳՆՈՒԹՅԱՆ ԽՄԲԱԿՆԵՐԸ

Սոցիալական ախտերի դեմ մղվող պայքարի մասին խոսելիս մենք արդեն չնշեցինք, թե ինչ խոշոր կարևորություն եր տալիս Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը իր բուժական հիմնարկությունների միջոցով տարվող սան-կրթական աշխատանքներին։

Յեվ հիրավի սանիտարական և առողջապահական անգրագիտությունը մեր յերկրի ամենամեծ չարիքներից մեկն է հանդիսանում։ Այդ անգրագիտության դեմ ավելի հաջող կերպով մաքառելու նպատակով Հ. Կարմիր Խաչի Գլխ. Վարչությունն անցյալ 1927 թվին ձեռնարկեց մի նոր միջոցի, այն է առաջին ոգնության խմբակների կազմակերպությանը։





Հ. Կ. ԽԱՉԻ Երևանի առաջին ոգնության խմբակը.

Առաջին ոգնության խմբակների կազմակերպության խնդրում վորոշված է ամեն կերպ աշխատել գրավել աշխատավորական և գյուղացիական լայն մասսաների մասնակցությունը այդ գործում: Առանձին ուշադրություն է դարձված ուժ տալու կանանց մասնակցությանը (վոչ պակաս 16 տարեկանից) այդ խմբակների մեջ այն մտքով, վոր նրանցից պատրաստվեն կամավոր աշխատավորների լայն կադրեր հիվանդ և վիրավոր զինվորներին խնամելու համար, վորի շնորհիվ կդյուրացվի բուժական հիմնարկությունների կազմի լրացումը:

Առաջին ոգնության խմբակները մեծ դեր ունեն կատարելու թե հնարավոր արտաքին բարդությունների ժամանակ առաջին ոգնություն հասցնելով վիրավորին, հիվանդին, կամ գազերով թունավորվածին, և թե ընթացիկ կյանքի խաղաղ պայմաններում վարժեցնելով աշխատավորական մասսաներին ինքնոգնության աշխատանքի մեջ և սովորեցնելով նրանց բոլոր անհրաժեշտ գիտելիքները հիվանդներին ու վիրավորներին խնամելու համար:

Ձեռնարկելով այդ գործին՝ Հ. Կարմիր Խաչի Գլխ. Վարչությունը դեռ 1927 թվի հուլիսին շրջաբերական հրահանգներ ուղարկեց իր բոլոր մասնաճյուղերին գավառներում, բացատրելով նրանց խնդրի կարևորությունը և առաջարկելով անմիջապես անցնել խմբակները կազմակերպելու աշխատանքներին: Նույն հրահանգներով միաժամանակ առաջարկվում եր այդ նպատակի համար տեղերում կազմակերպել հատուկ դասընթացներ:

Այդ դասընթացներում ավանդելիք գիտելիքների և տրվելիք դասախոսությունների ծրագրերն ուղարկված են բոլոր մասնաճյուղերին: Դասընթացների համար վորոշված է կազմել խմբեր, յուրաքանչյուրը բաղկացած մոտավորապես 50 հոգուց: Դասընթացները պետք է կազմակերպվեն Կարմիր Խաչի բժիշկների ղեկավարությամբ, վորոնք կարող են հրավիրել մասնակցելու այդ գործին նաև ուրիշ բժիշկների: Գործի հաջողության համար հրահանգով առաջարկված է մասնաճյուղերին աշխատել ապահովել տեղական խորհրդային, արհեստակցական, հասարակական մարմինների և մանավանդ Գաշը—Ավիոքիմի համագործակցությունը: Այդ նպատակով Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը համապատասխան դիմումներ է արել հիշյալ մարմինների կենտրոնական կոմիտեներին Յերևանում:

1927 թվի աշնանը յերկրի գրեթե բոլոր աչքի ընկնող վայրերում արդեն կազմակերպված եյին առաջին ոգնության խմբակներ, վորոնց թիվը հասնում եր 18-ի, և վորոնց մեջ պարապում եյին մոտ 510 հոգի:

Տարվա վերջին տեղի ունեցան ավարտման քննություններ 14 խմբակներում, և ավարտման վկայականների արժանացան 334 հոգի, վորոնք ներկայացնում են Հ. Կարմիր Խաչի առաջին ոգնության խմբակների շրջանավարտների առաջին կադրը:

Բերում ենք մի քանի վիճակագրական տվյալներ այդ խմբակների կազմի վերաբերմամբ.



Ըստ սեռի խմբակների անդամների 85% կազմում են կանայք: Ըստ սոցիալական դրության—բանվորները կազմում են 28%, գյուղացիները—18%, ծառայողները— 17%, ուսանողներն ու դպրոցականները—22%, մնացած 15% կազմում են արհեստավորները և անգործները:

Առաջին ոգնության խմբակների կազմակերպությունից անկախ Կարմիր Խաչի Գլխ. Վարչությունը նպատակ ունենալով վորքան հնար է լայն մասսայական խավերում տարածել առաջին ոգնության վերաբերյալ գործնական գիտելիքները՝ 1927 թ. աշնանը հրատարակել է առանձին բրոշյուր «Առաջին Ոգնություն» վերնագրով, վորից տպագրելով 5000 որինակ իր մասնաճյուղերի և գավգործկոմների միջոցով ուղարկել է ձրիաբար ցրելու Հայաստանի բոլոր վայրերում:

* *

*

Վերջացնելով Կարմիր Խաչի անցած յերեք տարիների գործունեյության ամփոփ տեղեկագիրը՝ Գլխավոր Վարչությունը պարտք է համարում հայտնել, վոր ամբողջ այդ ժամանակաշրջանում նա աշխատել է իր բոլոր ուժերի թույլ տված սահմաններում ընդառաջ գնալ ժողովրդի կարիքներին և բուժել նրա ցավերը, հենվելով իր աշխատանքի մեջ նույն այդ ժողովրդի աշխատավորական լայն մասսաների համակրության և աջակցության վրա: Գլխավոր Վարչությունն ինքը խորապես գիտակցում է, վոր իր գործունեյությունը դեռ հեռու յե ժողովրդական մասսաների բոլոր առաջադրած պահանջները բավարարելու և նրանց ցավերը խնամելու աստիճանից: Առաջիկայում նա ել ավելի յեռանդով պիտի շարունակի իր ջանքերը նույն ուղղությամբ, աշխատելով ել ավելի ուժեղացնելու ու խորացնելու իր կապը աշխատավորական մասսաների և նրանց շահերը պաշտպանող արհեստակցական, հասարակական և այլ մարմինների հետ: Յեվ զորավիգ ունենալով այդ մասսաների գործակցությունը, վայելելով կառավարության լիակատար աջակցությունը, միևնույն ժամանակ գտնելով համակրություն, վստահություն ու նյութական ոժանդակություն արտասահմանի հայ գաղութների կողմից, Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը լիահույս է, վոր առաջիկայում նա կկարողանա ել ավելի արդյունավետ գործունեյություն ցույց տալ:

# ՀԱՄԱՌՈՏ ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ 1924, 1925, 1926 ՅԵՎ 1927 Թ. Թ. ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մինչև 1924 թիվը և մասամբ 1924 թ. Հ. Կարմիր Խաչի յեկամուտները կրում էյին պատահական բնույթ: Յեկամուտներից միայն պետական ոժանդակությունն էր, վորը կարելի յեր դասել կայուն յեկամուտների շարքը: Այդ յեկամուտը կազմել է ընդհանուր յեկամտի մոտ 50%-ը: Իսկ մնացած 50%-ը յեկամտի յեղել է պատահական աղբյուրներից: Պարզ է, վոր այդ պայմաններում Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը հնարավորություն չի ունեցել մտցնել իր ֆինանսական գործի մեջ վորևէ պլանայնություն, կատարել է իր ծախսերը առանց նախահաշվի, ղեկավարվելով միայն գործի ընթացիկ պահանջով և հոգալով մինչ այդ ձեռնարկած բուժական հիմնարկների և կենտրոնական ապարատի ծախսերը:

1924 թվի վերջերից միայն յեկամուտները սկսում են վորոշ չափով կանոնավորվել և արդեն 1925 թվի սկզբին պետական հատկացումների յեկամուտներին ավելանում են մասնատրումներ զվարճատեղերից, յերկաթուղային տոմսերի վճարից: Դրան ավելանում է նաև արտասահմանյան հայ գաղութների ոժանդակությունը Հ. Կարմիր Խաչի մասնաճյուղերի միջոցով դրամով և գլխավորապես դեղորայքով ու զանազան ապրանքներով:

Յեվ ահա սկսած 1925 թվից Հ. Կարմիր Խաչը անցնում է պլանային աշխատանքների, կազմելով յուրաքանչյուր տարվա համար յել և մուտքի նախահաշիվ:

№ № I և II աղյուսակներում տրվում է նախահաշիվների կատարողական պատկերը սկսած 1924 թվից մինչև 1927 թիվը ներառյալ:

Յեթե համեմատենք այդ տարիների կատարողական նախահաշիվները նույն տարիների համար ծրագրածի հետ, կը ստանանք հետևյալ պատկերը.

(Թվերը բերված են ռուբլիներով).

ԱՂՅՈՒՍԱԿ III.

| Տարիները | Ծրագրըված էր | Կատարված է |
|---|---|---|
| **1925 թ.** | | |
| **Մուտք** | 91.729 | 85.337 |
| **Յելք** | 87 178 | 83.649 |
| **1926 թ.** | | |
| **Մուտք** | 123.744 | 102.937 |
| **Յելք** | 183.342 | 111.115 |
| **1927 թ.** | | |
| **Մուտք** | 186.100 | 159.542 |
| **Յելք** | .264.796 | 172.960 |



Նկատելի տարբերությունը ծրագրված և կատարողական նախահաշիվների գումարների մեջ բացատրվում է նրանով, վոր յեկամուտների աղբյուրները, ինչպես վերն ասացինք, զուրկ էյին կայունությունից, և դրա հետևանքով Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը յեկամուտները ծրագրելիս մոտեցել է խնդրին մեծ զգուշությամբ: Փալով ծախսի գումարներին, ճիշտ է, այդ գումարները ծրագրելիս Վարչությունը պետք է հենվեր սպասելիք յեկամուտների վրա, բայց նա ծրագրել է մաքսիմալ և ուղենիշ (որիենտիր) գումարներ, վորպեսզի յեկամուտների ավելանալու դեպքում հնարավորություն ունենա ծրագրած մաքսիմումը իրագործել:

Ինչպես ցույց է տալիս № III-րդ աղյուսակը, նրան այդ չի հաջողվել այն պատճառով, վոր սկսած 1925 թվից սպասելիք յեկամուտները չեն արդարացել: Սակայն այդ չի նշանակում, վոր Հ. Կարմիր Խաչը ստիպված է յեղել հետ կանգնել իր նախադծած ձեռնարկումներից այս կամ այն տարվա ընթացքում: Նա իր ծրագրածն այնուամենայնիվ լրիվին իրականացրել է կյանքի մեջ նույն տարում վորոշած ժամանակից մի քանի ամսով ավելի ուշ:

Յեկամտային մասի վերաբերմամբ պետք է նշել, վոր բացի պետական ոժանդակության հոդվածից,—այն է 5%-ային հավելումից արհեստակցական տուրքի վրա, վորը մտցված էր Հայաստանի Ժողկոմխորհի 1922 թ. հունիսի 21-ի վորոշմամբ և կիրառվում էր մինչև 1925 թվի վերջը, յերբ այդ մասնատրումը վերացվեց,—խոշոր տեղը Հ. Կարմիր Խաչի յեկամուտների մեջ կազմում են նվիրատվությունները, դրամով և ապրանքներով: Այդ աղբյուրից կազմվում է Հ. Կարմիր Խաչի յեկամուտների 59,1%:

Տարեց-տարի սկսում են ավելանալ մասնատրումները՝ զվարճատեղերից և յերկաթուղու տոմսակներից, վորոնց տեսակարար կշիռը 4 տարվա ընթացքում կազմել է 16,8%:

Ծախսերի մասում խոշոր տեղը բռնում է աշխատավարձը—38,4%: Յեվ դա հասկանալի յէ, յեթե աչքի առաջ ունենանք Հ. Կարմիր Խաչի հիմնարկների ցանցը (տրոպկայաններ, հիվանդանոցներ, բուժակայաններ, մանկատուն և այլն):

Հետևյալ հոդվածը, վորը Կարմիր Խաչի յելքի մեջ բռնում է յերկրորդ տեղը, դա վերաշինության և վերանորոգման ծախսերն են, վորոնք կազմում են 14,3%:

Հաշվետարիների ընթացքում վերանորոգված, ընդլայնված և հարմարեցված են հետևյալ հիմնարկների շենքերը.

Մեղրու տրոպկայան,
Արփայի տրոպկայան,
Խաթունարխի բժշկակայան,
Դավալույի բժշկակայան,
Արադդարյանի հիվանդանոց,
Սև Քարի բժշկակայան,
Սարդարաբադի բժշկակայան,
Մեծ Պարնիի վենդիսպանսեր և
Մանկատուն:

Պետք է կանգ առնել նաև գրասենեկային, տնտեսական և մանր ծախքերի ու ճանապարհածախքի հոդվածների վրա, վորոնց տեսակարար կշիռը բավական մեծ է, 16,1%:

Այդ հոդվածների տակ անցել են մեծ մասամբ մանր վերանորոգման ծախքերը, իսկ ճանապարհածախքի ընդհանուր 22939 ռուբլի գումարի մեջ մտնում են նաև Հայաստանի Կարմիր Խաչի կողմից 1925 թվի աշնանն արտասահման ուղարկված Պատվիրակության ծախքերը: Հիվանդանոցների և մանկատան պարենավորման, կահավորման և դեղորայքի ծախք յեղել է մոտ 104.000 ռ., այսինքն 23,8%:

Ծախքերի պատկերը ըստ հիմնարկների և հոդվածների 1924—1927 թ. թ. համար տրվում է №№ IV, V, VI, և VII աղյուսակներում:

Վերջացնելով Հ. Կարմիր Խաչի Գլխավոր Վարչությունը հարկ է համարում չեշտել, վոր հաշվետու ժամանակամիջոցում նա հետապնդել է միշտ այն գիծը, վորպեսզի իր սուղ միջոցները ոգտագործվեն վորքան կարելի յե նպատակահարմար յեղանակով, կրճատելով ըստ հնարավորին վարչա-տնտեսական ծախքերը և ավելացնելով գործառնականը:



ԱՂՅՈՒՍԱԿ I

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ

**1924, 1925, 1926 և 1927 թ. թ. նախահաշիվների յեկամտային մասի կատարողական պատկերը ըստ տեսակների (ռուբլիներով).**

| | ՅԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ ԸՍՏ ՏԵՍԱԿՆԵՐԻ | 1924 թ. | 1925 թ. | 1926 թ. | 1927 թ. | 4 տարվա մուտքի գումարը | % ընդհանուր գումարի |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Պետական օժանդակություն | 22693 | 15745 | 2199 | — | 40637 | 10,1 |
| 2 | Անդամավճար | 726 | 1576 | 1404 | 1184 | 4890 | 1,2 |
| 3 | Մասհանում զվարճատեղերից | 109 | 301 | 7736 | 12720 | 20866 | 5,2 |
| 4 | » յերկաթուղուց | 7601 | 11752 | 14054 | 13116 | 46523 | 11,6 |
| 5 | Նվիրաբերություններ ապրանքով և դրամով | 21056 | 51497 | 43833 | 119818 | 236204 | 59,1 |
| 6 | Նպաստ | — | 3000 | 32216 | 9487 | 44703 | 11,2 |
| 7 | Զանազան պատահական յեկամուտներ | 296 | 1466 | 1495 | 3217 | 6474 | 1,6 |
| | Ընդամենը | 52481 | 85337 | 102937 | 159542 | 400297 | 100,0 |
| | Աճման %-ը համեմատած նախորդ տարվա հետ | 100,0 | 162,6 | 120,6 | 154,9 | | |
| | Աճման %-ը համեմատած 1924 թվի հետ | 100,0 | 162,6 | 196,1 | 304,0 | | |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ
### կատարողական նախահաշիվ 1927 Թ.

ԱՂՅՈՒՍԱԿ VII

| ՀԻՄՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ | Աշխատավարձ | | Սոցիալ. ապահովագրություն | | Լիկվիդացիա և կոմպենսացիա | | Գրասենյակային | | Տնտեսական | | Վառելիք | | Լուսավորություն | | Վարձ | | Փոստ-հեռագրական | | Ճանապարհածախս | | Փոխադրական ծախսեր, գույքի և կերակ. | | Պարենավորում | | Գույք | | Վերանորոգություն | | Փոխադրական միջոցներ | | Նպաստ | | Դեղանյութեր, վիրակապ. նյութեր և վիրաբուժ. գործիքներ | | Ընդամենը | | %% |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ռ. | կ. | ռ. | կ. | ռ. | կ. | ռ. | կ. | ռ. | կ. | ռ. | կ. | ռ. | կ. | ռ. | կ. | ռ. | կ. | ռ. | կ. | ռ. | կ. | ռ. | կ. | ռ. | կ. | ռ. | կ. | ռ. | կ. | ռ. | կ. | ռ. | կ. | ռ. | կ. | |
| Գլխավոր վարչություն | 8590 | 35 | 1045 | 72 | — | — | 433 | 82 | 134 | 82 | 109 | 90 | — | — | — | — | 641 | 09 | 1185 | 21 | — | — | — | — | 896 | 70 | — | — | 840 | 78 | — | — | 406 | 40 | 14284 | 79 | 8,2 |
| Դիսպանսեր | 1229 | 99 | 151 | 86 | — | — | 77 | 38 | 190 | 77 | — | - | 37 | 43 | 1659 | 28 | — | — | — | — | — | — | — | — | 102 | 65 | — | — | — | — | — | — | — | — | 3449 | 36 | 2 |
| Մանկատուն | 4540 | 67 | 539 | 94 | 192 | — | 677 | 27 | 775 | 90 | 1030 | 06 | 197 | 32 | — | — | — | — | 384 | 94 | 2595 | 61 | 9418 | 13 | 260 | 01 | 1904 | 56 | — | — | — | — | 104 | 28 | 22620 | 69 | 13 |
| Էջմիածնի տրոպիկայան | 9569 | 47 | 1008 | 12 | 110 | 26 | 228 | 92 | 332 | 93 | 419 | 78 | 138 | 65 | 30 | — | 29 | 20 | 789 | 66 | — | — | 1511 | 20 | 1409 | 63 | 5904 | 52 | — | — | — | — | 3191 | 36 | 24673 | 70 | 14,2 |
| Մեղրիի » | 5765 | 73 | 678 | 11 | 221 | 70 | 110 | 57 | 118 | 10 | 417 | 58 | 76 | 18 | — | — | 22 | 23 | 431 | 76 | — | — | 1478 | 81 | 446 | 68 | 281 | 62 | — | — | — | — | 770 | 64 | 10819 | 71 | 6,2 |
| Արփայի » | 3897 | 49 | 437 | 54 | 293 | 17 | 144 | 75 | 128 | 59 | 163 | 53 | 61 | 47 | — | — | 16 | 30 | 425 | 35 | — | — | 113 | 34 | 113 | 44 | 196 | 70 | 355 | 95 | — | — | 374 | 74 | 6722 | 36 | 4 |
| Արազդայանի հիվանդանոց | 4520 | 92 | 504 | 51 | 603 | 24 | 85 | 75 | 216 | 36 | 181 | 04 | 112 | 58 | — | — | 2 | 64 | 207 | 05 | — | — | 1458 | 06 | 180 | 59 | 234 | 68 | 315 | 90 | — | — | 2029 | 93 | 9653 | 25 | 5,6 |
| Սև-Քարի բժկայան | 3210 | 40 | 399 | 74 | 165 | — | 75 | 62 | 31 | 14 | 10 | 21 | 4 | 89 | — | — | 29 | 52 | 437 | 44 | — | — | — | — | 70 | 27 | 10802 | 71 | — | — | — | — | 591 | 16 | 15828 | 10 | 9,4 |
| Սարդարաբադի » | 4538 | 31 | 419 | 04 | 75 | — | 102 | 37 | 123 | 87 | 89 | 51 | 96 | 04 | — | — | 12 | 44 | 191 | 04 | — | — | — | — | 98 | 20 | — | — | — | — | — | — | 1042 | 38 | 6788 | 20 | 4 |
| Գառնիի վենբժկայան | 4316 | 50 | 520 | 68 | 288 | 50 | 64 | 72 | 82 | 62 | 85 | 70 | 47 | 70 | — | — | 12 | 90 | 780 | 67 | — | — | — | — | 35 | 21 | — | — | — | — | — | — | 2194 | 91 | 8430 | 27 | 5 |
| Զանգեզուրի 2 բժկայան | 3875 | — | 471 | 64 | 52 | 50 | 186 | 82 | 374 | 57 | — | — | — | — | — | — | 8 | — | 49 | 50 | — | — | — | — | 880 | 41 | — | — | — | — | — | — | 1169 | 90 | 7068 | 39 | 4,1 |
| Խաթունարխի » | 2196 | 70 | 277 | 13 | 152 | — | 99 | 34 | 86 | 59 | 30 | 61 | 28 | 69 | — | — | — | — | 131 | 66 | — | — | — | — | 57 | 58 | — | — | — | — | — | — | 1639 | 18 | 4699 | 48 | 2,7 |
| Լենինականի վեներաշավախումբ | 1497 | 18 | — | — | — | — | 6 | 14 | 151 | 57 | 146 | 91 | 4 | 65 | — | — | — | 69 | 192 | 11 | — | — | — | — | — | — | — | — | — | — | 50 | — | 2415 | 08 | 4464 | 33 | 2,5 |
| Նոր-Բայազետի շրջիկ ակնաբուժ. խումբ | 222 | 50 | — | — | — | — | 17 | 02 | 11 | 28 | — | — | 2 | 10 | — | — | — | — | 55 | 65 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 42 | 45 | 351 | — | 0,2 |
| Գլխավոր. համբար | 229 | 16 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 1000 | — | 273 | 92 | 1503 | 08 | 0,8 |
| Ցելենովկայի հիվանդանոց | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 60 | — | 1242 | 15 | — | — | — | — | 52 | 18 | 1354 | 93 | 0,6 |
| Առաջին օգնության խմբակներ | 624 | — | — | — | — | — | 588 | 77 | 99 | 93 | — | — | — | — | — | — | 2 | 4 | — | — | — | — | — | — | 50 | — | — | — | — | — | — | — | 85 | 80 | 1450 | 90 | 0,7 |
| Նպաստ | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 8431 | 85 | — | — | 8431 | 85 | 5 |
| Փոխադր. ծախսեր | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 8181 | 07 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 8181 | 07 | 4,8 |
| Արտասահմ. պատվիրակություն | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 12186 | 17 | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | — | 12186 | 17 | 7 |
| Ընդամենը | 58824 | 37 | 6454 | 03 | 2153 | 37 | 2899 | 26 | 2859 | 25 | 2684 | 83 | 807 | 70 | 1689 | 28 | 777 | 41 | 17448 | 21 | 10776 | 68 | 13979 | 54 | 4661 | 37 | 20566 | 94 | 1512 | 63 | 9481 | 85 | 15884 | 91 | 172961 | 63 | 100 |

ՀԱՅԱՍՏԱՆ
կատ...րողական

| ռ. | կ. | | կ. | ռ. |
|---|---|---|---|---|
| 109 | 90 | | — | — |
| — | - | 7 | 43 | 1659 |
| 030 | 06 | 7 | 32 | — |
| 419 | 78 | 8 | 65 | 30 |
| 417 | 58 | 6 | 18 | — |
| 163 | 53 | 1 | 47 | — |
| 181 | 04 | 2 | 58 | — |
| 10 | 21 | 4 | 89 | - |
| 89 | 51 | 6 | 04 | — |
| 85 | 70 | 7 | 70 | — |
| — | — | | — | — |
| 30 | 61 | 8 | 69 | — |
| 146 | 91 | 4 | 65 | — |
| — | — | 2 | 10 | — |
| — | — | | — | — |
| — | — | | — | — |
| — | — | | — | — |
| — | — | | — | — |
| — | — | | — | — |
| — | — | | — | — |
| 84 | 83 | 7 | 70 | 1689 |

ԱՂՅՈՒՍԱԿ IV.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ

*Եկամուտների և ծախքերի ընդհանուր պատկերը 1924—1927 թվականների համար (ռուբլիներով).*

| Թվական | Եկամուտ | Ծախք | Որ %-ն է ծախսված |
|---|---|---|---|
| 1924 թ. | 52481 | 31.485 | 60,0 |
| 1925 թ. | 85337 | 83.648 | 98,0 |
| 1926 թ. | 102937 | 111.115 | 107,7 |
| 1927 թ. | 159542 | 172.960 | 108,4 |
| Ընդամենը | 400.297 | 399.208 | 99,6 |

## ՑՈՒՑԱԿ Հ. ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻՑ ՍՏԱՑԱԾ ԴԵՂՈՐԱՅՔԻ ՅԵՎ ԱՅԼ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ 1924—1927 Թ. Թ. *)

| | | | | |
|---|---|---|---|---|
| | 1924 թ. | | | |
| 1 | 14 սեպտեմ. | Ռումինիայի հայ գաղութից . . | դեղորայք | 1 արկղ |
| 2 | 16 › | Մարսելի մասնաճյուղից . . . | » | 2 » |
| 3 | 20 դեկտեմ. | Ամերիկա Նյու-Յորքից Պետական Հայ Կարմիր Խաչից . . . . | հին շորեր | 62 հատ |
| 4 | » » | » » » » | » կոշիկներ | 23 պարկ |
| | 1925 թ. | | | |
| 5 | ապրիլ | Փարիզի Հ. Կ. Խաչից . . . . . | դեղորայք | 5095 ամպուլ ս. |
| 6 | 20 » | Նյու-Յորք Պետ. Հ. Կ Խաչից . . | մատրասներ | 10 հատ |
| 7 | 11 օգոստոսի | Մարսելի Հ Կ. Խ. մասնաճյուղից . | դեղորայք | 2 արկղ |
| 8 | » › | Փարիզի › » » » | խինին | 17 ու կես կիլ |
| 9 | 15 › | Ն.-Յորքի Պ. Հ. Կ. Խաչից . . . | դեղորայք | 7 արկղ |
| 10 | 16 › | » » » » » | բժ. գործիքներ | 2 › |
| 11 | 20 նոյեմբ. | » » » » » » | հին շորեր | 60 հատ |
| 12 | » » | » » » » » | կոշիկներ | 10 պարկ |
| 13 | » » | Բոստոնի հայ գաղութից . . . | հին շորեր | 18 հատ |
| | 1926 թ. | | | |
| 14 | 16 հոկտեմ. | Մարսելի Հ. Կ. Խ. մասնաճյուղից | դեղորայք | 4 1/3 կիլո |
| 15 | 1 նոյեմ. | Նյու-Յորքի Պետ. Հ. Կ. Խաչից . | հին շորեր | 86 հատ |
| 16 | 30 » | » » › » › | դեղորայք | 3 արկղ |
| | 1927 թ | | | |
| 17 | 12 հունվարի | Լոնդոնից Հակոբյան յեղբարց միջոցով . . . . . . . . . | » » | 6 արկղ 75 կիլո խինին |
| 18 | 31 » | Լոնդոնի Հ. Կ. Խ. մասնաճյուղից | ադյալ (ծածկոց) | 7 հատ |
| 19 | 11 փետրվարի | Համբուրգից . . . . . . . . | հին շորեր | 2 զամբյուղ |
| 20 | 5 մարտի | Մարսելի Հանգանակիչ Կենտր. հանձնախմբից . . . . . . . | ադյալ (ծածկոց) | 5 հատ |
| 21 | » » | Մարս. Հանգ. Կ. հանձնախմբից | դեղորայք | 1 արկղ |
| 22 | 10 » | Ամեր. Նյու-Յորք Պ. Հ. Կ. Խաչից | մեկ ավտո մեքենա | 1 հատ |
| 23 | 11 ապրիլի | Փարիզի Աղետյալների Որբության Կոմիտեից . . . . . | դեղորայք | 18 արկղ |
| 24 | » » | » » » » | հին շորեր | 20 հատ |
| 25 | » » | » » » » | » » | 4 պարկ |
| 26 | 16 » | » » » › | դեղատնային իրեր | 2 արկղ |
| 27 | 24 » | Փարիզի Բարեգործական Ընկեր. | վիրակապային և հիվանդանոց. իրեր | 2 » |
| 28 | 27 » | Փարիզից Գրիգոր յեպ. Պալագյանի միջոցով . . . . . . | 2 միկրոսկոպ | 1 » |
| 29 | » » | Փարիզի Հայ Տիկնանց Մ. բժ. Բոլոյանի միջոցով . . . . | դեղորայք | 1 » |
| 30 | 27 » | Փարիզի Աղետ. Որբ. Կոմիտեյից . | » | 1 արկղ |
| 31 | 5 մայիսի | Յեգիպտոսից Հ. Բ. Ընկ. Միությունից . . . . . . . . | հին շորեր | 27 » |
| 32 | » » | Ալեքսանդրիայից Համազգային ոգնության մարմնից . . . . | » » | 15 » |
| 33 | 11 » | Մանչեստրի հայ գաղութից Ղ. յեպ. Դուրյանի միջոցով . . . | » » | 6 հատ |
| 34 | » » | » » » | դեղորայք | 5 արկղ |
| 35 | » » | Փարիզից՝ Աղետ. Ոգնության Կոմիտեյից . . . . . . . | » և վիրաբուժ. գործիքներ | 2 » |
| 36 | 12 » | » › » » | դեղորայք | 3 » |
| 37 | » » | » » › » | » | 5 » |
| 38 | » » | » » » » | » | 1 » |
| 39 | » » | Բելգիայի Հ. Կ. Խաչի մասնաճյուղից . . . . . . . . . | ծածկոցներ և հիվանդանոցային իրեր | 12 հատ |
| 40 | 16 » | Ռումինիայի հայ գաղութից . . | հին շորեր | 48 » |
| 41 | » » | » » » | կոշիկներ | 2 արկղ |
| 42 | 25 › | Մարսելի Հանգ. Հանձնախմբից . | դեղորայք | 1 » |
| 43 | » » | » » » | հիվանդ. տարական. | 1 » |
| 44 | 31 › | Մանչեստրի հայ գաղութից . . | զանազան մանուֆակտուրա . . .<br>կոշիկներ . . . . | 2 մեծ հակ<br>2 արկղ |
| 45 | 13 հունիսի | Նյու-Յորքի Պետ Հ. Կ Խաչից . | հին շորեր | 60 հատ |
| 46 | 14 » | Փարիզի Հ. Կ. Խ. մասնաճյուղից | Կ. Խաչի նշաններ | |
| 47 | 14 հուլիսի | Փարիզի Աղ. Որբ. Կոմիտեյից . | դեղորայք | 1 արկղ |
| 48 | 16 » | » » » » | » | » » |
| 49 | » » | Գոյլբերից . . . . . . . . . | հին շորեր | » » |
| 50 | » » | Ռումինիայի հայ գաղութից . . | » » | 16 » |
| 51 | 27 » | Փարիզի Որբության Կոմիտեյից | » » | 6 հատ |
| 52 | » » | » » » | » » | 2 պարկ |
| 53 | » » | Բելգ. Անվերսի Մասնաճյուղից . | › » | 2 արկղ |
| 54 | » » | Նյու-Յորքի Պ. Հ. Կ. Խաչից . . | » » | 38 հատ |
| 55 | › » | » » » » » › | բժ. պիտույքներ | 1 արկղ |
| 56 | » » | » » » › » › | Electric sterilizer cabinet- | » › |
| 57 | 9 սեպտեմ. | Փարիզի Աղետ. Որբ. Կոմիտեյից | դեղորայք | դեղ. 1 արկղ և 46 1/2 կ. խինին |
| 58 | 14 հոկտեմ. | Նյու-Յորքի Պետ. Հ. Կ. Խաչից . | հին շորեր | 35 հատ |
| 59 | › » | » » » » » » | կոշիկներ | 64 պարկ |
| 60 | › » | » » » » » » | գուլպա գործելու մեքենա | 1 արկղ |
| 61 | » » | » » » » » » | դեղ. և գուլպաներ | 1 » |
| 62 | 18 » | Փարիզի Հայ Տիկնանց Միությունից . . . . . . . . | ծածկոց. ադյալներ | 28 հատ |
| 63 | » » | Միլանի հայ գաղութից . . . . | հին շորեր | 1 մեծ արկղ |
| 64 | 20 դեկտեմ. | Նյու-Յորք Պ. Հ. Կ. Խաչից . . | սանիտարնի ավտո մեքենա | 1 հատ |

*) Մինչև 1924 թ. մայիս ամիսը ստացված ապրանքների ցուցակը տպագրված է Հ. Կ. Խաչի նախորդ տեղեկագրի մեջ, վորը հրատարակված է 1924 թվին:

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՑԱՆՑԸ

1. *Դեղապահեստ* . . . . . . . . . . . 1922 *թվից*
2. *Զանգեզուրի Ղարաքիլիսի բժշկակայան* 1923 »
3. » *Տեղի* » 1923 »
4. *Էջմիածնի տրոպկայանը* . . . . . . 1924 »
5. *Մեղրիի* » . . . . . . . . 1924 »
6. *Արփայի* » . . . . . . . . 1924 »
7. *Սարդարապատի բժշկակայան* . . . . 1925 »
8. *Սեվ Քարի* » . . . . 1925 »
9. *Արագդայանի հիվանդանոց* . . . . . 1925 »
10. *Ակնաբուժական № 1 խումբ* . . . . . 1925 »
11. *Մանկատուն* . . . . . . . . . . . 1925 »
12. *Ակնաբուժական № 2 խումբ* . . . . . 1926 »
13. *Խաթունարխի բժշկակայան* . . . . . 1926 »
14. *Մեծ Պարնիի վենդիսպանսեր* . . . . . 1927 »
15. *Լենինականի վեներշավախումբ* . . . . 1927 »
16. *Ջեյվայի բուժակակայան* . . . . . . . 1927 »
17. *Նոր Յեվդոկիայի* » . . . 1927 »
18. *Թյուրքմենլիի* » . . . 1927 »
19. *Պիոներների առողջության սպասարկում* 1927 »

ՀՀ Ազգային գրադարան
NL0217301

4084